Պետական մարմինների ներկայացրած առաջարկները և մեկնաբանությունները «ԱՃԹՆ օրենսդրական և ինստիտուցիոնալ վերլուծություն» ուսումնասիրության նախագծի վերաբերյալ

Առողջապահության նախարարություն

Հարգելի պարոն Աղաջանյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2018 թվականի մայիսի 10-ի թիվ 02/01.30/6884-18 հանձնարարականի՝ «ԱՃԹՆ օրենսդրական և ինստիտուցիոնալ վերլուծություն» ուսումնասիրության նախագծի վերաբերյալ, հայտնում եմ ըստ հանձնարարականի կետերի.

- «Հեղինակները որ էջերում ինչ սխալներ են թույլ տվել Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի նկարագրողական-վերլուծական հատվածներում»՝- «ԱՃԹՆ օրենսդրական և ինստիտուցիոնալ վերլուծություն» նախագծի «Առողջապահական մոնիթորինգ» (էջ՝ 75) մասում նշվում է, որ համաձայն «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների ազդեցության սոցիալ-հիգիենիկ զննումների կազմակերպումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայությունը: Հարկ է նշել, որ «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում (այսուհետ՝ Օրենք) արդեն իսկ կատարվել են համապատասխան փոփոխություններ (2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-162-Ն ՀՀ օրենք) և սահմանվել են ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում ՀՀ առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի և Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած՝ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի լիազորությունները: Մասնավորապես՝ Օրենքի 6-րդ հոդվածում

սահմանվել են ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում ՀՀ առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի լիազորությունները, որտեղ և ներառվել է բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների ազդեցության սոցիալ-հիգիենիկ դիտարկումների, ուսումնասիրությունների իրականացումը:

- Օրենսդրական/իրավական դաշտի վերլուծության մեջ սխալների կամ թերացումների առկայության դեպքում որոնք են առաջարկվող ուղղումները»՝ - նշված է, որ բացակայում է «Մարդու առողջության վրա ազդեցության գնահատման կարգը» իրավական ակտը, մինչդեռ «Տնտեսական գործունեության նպատակահարմարության վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացում մարդու առողջությանը հասցվող վնասների հաշվարկի մեթոդաբանությունը» սահմանվել է ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի դեկտեմբերի 18-ի No 2995–Ա հրամանով: Չի ներառված նաև ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի աղտոտվածության բարձր մակարդակ ունեցող (մասնավորապես՝ հանքավայրերին հարող) տարածքներում մշտադիտարկման կարգը հաստատելու մասին» N 762-Ն որոշումը, որը սահմանում է իրականացվող բնապահպանական մոնիթորինգի (մշտադիտարկումների) իրականացման և արդյունքների տրամադրման կարգը: Ինչ վերաբերվում է առողջապահական մոնիթորինգի արդյունքների տրամադրմանը, ապա դրանք առողջապահական տեսչական մարմնից բացի, տրամադրվում են նաև այլ պետական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ ըստ իրենց իրավասությունների ոլորտների:
- «Առաջարկվող քայլերից որոնց ուղղությամբ են իրականացվել կամ այժմ իրականացվում բարեփոխումներ, նկարագրել դրանք»՝-զեկույցի «Հանքարդյունաբերական ծրագրերի՝ համայնքի առողջության վրա ազդեցության գնահատման վերաբերյալ միջազգային լավագույն փորձը» բաժնի կապակցությամբ հայտնում եմ, որ ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 04-ի N 4 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Առավել տարածված ոչ

վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի 2016-2020թթ ծրագիրը», որի Հավելված 2-ի 10-րդ կետով նախատեսված է և ներկայում մշակվում է «Բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի ազդեցության ռիսկի համաճարակաբանական գնահատման մեթոդաբանությունը»՝ հիմնվելով միջազգային լավագույն փորձի վրա: Մեթոդաբանության հաստատման արդյունքում հնարավորություն կընձեռվի վիճակագրական և վերլուծական մեթոդների կիրառմամբ հաշվարկել մարդու առողջության վրա շրջակա միջավայրի ազդեցության պոտենցիալ և իրական ռիսկը:

- «Բարձրացված օրենսդրական բացերի լուծման սեփական առաջարկներ» կետի վերաբերյալ՝ - առաջարկվում է նախագծի «Պատասխանատու հանքարդյունաբերության որոշակի խնդիրների վերաբերյալ նախնական ճանապարհային քարտեզ» գլխի 3-րդ աղյուսակից հանել 3.7 «Մարդու առողջության վրա ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման ընդունում» կետը: Ինչ վերաբերվում է 3.4, 3.5 և 3.6 կետերում նշված «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ միջոցառումներին, ապա ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակման փուլում է գտնվում «Առողջապահության մասին» ՀՀ օրենքը, որը կփոխարինի ոլորտի գործող օրենքներին: Այն կարգավորելու է նաև հանրային առողջապահության ոլորտի հարաբերությունները, որոնց շարքում կներառվի նաև նշված հարցերը: Ուստի առաջարկվում է 3.4, 3.5 և 3.6 կետերում նշված գործողությունները վերախմբագրել՝ կատարման ժամկետը սահմանելով «միջին»:

Միաժամանակ հայտնում եմ, որ նախագիծը ներկակայցվել է ՀՀ առողջապահական տեսչական մարմնի կարծիքին, որի առաջարկությունները կներկայացվի լրացուցիչ:

Արդարադատության նախարարություն

Հարգելի պարոն Աղաջանյան

Ի կատարումն Վարչապետի 2018 թվականի մայիսի 10-ի թիվ 02/01.30/6884-18 հանձնարարականի՝ «ԱՃԹՆ օրենսդրական և ինստիտուցիոնալ վերլուծություն» ուսումնասիրության նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

1. Նախագծով ներկայացվում են մետաղական հանքարդյունաբերության ոլորտում վճարվող հարկատեսակները (էջ՝ 6): Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ 2016 թվականի հոկտեմբերի 4-ին ընդունվել է Հարկային օրենսգիրքը, որով նախատեսվել է բնապահպանական հարկատեսակը և բնօգտագործման վճարը: Այսպես, բնապահպանական հարկը բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով պետական բյուջե վճարվող հարկ է: Բնօգտագործման վճարը պետական սեփականություն համարվող բնական պաշարների արդյունավետ և համալիր օգտագործման, ինչպես նաև բնական պաշարների օգտագործումը փոխհատուցելու նպատակով այդ պաշարների օգտագործման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող վճար է, իսկ ռոյալթին հանդիսանում է բնօգտագործման վճարի տեսակ, որը մետաղական օգտակար հանածոների օգտագործումը փոխհատուցելու նպատակով, ինչպես նաև մետաղական օգտակար հանածոների և դրանց կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի օտարումից ստացվող շահութաբերության համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող վճար է:

2. Նախագծի առաջարկ I-ում (էջ՝ 8) օրենսդրական հստակեցման նպատակով առաջարկվում է «Ընդերքի մասին» օրենսգրքում փոփոխություններ կատարելու միջոցով ամրագրել ընդերքօգտագործման հետ կապված գործունեության հրապարակայնության շրջանակները, որոնք կներառեն թույլտվությունների տրամադրման գործընթացի և պայմանագրերի հրապարակմանն առնչվող դրույթներ: Պետք է նշել, որ առաջարկն արդեն իսկ իրացված է «Ընդերքի մասին» օրենսգրքի 9-րդ հոդվածում, որը խմբագրվել է 2018 թվականի մարտի 21-ին: Մասնավորապես, «Ընդերքի մասին» օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝ հրապարակման ենթակա տեղեկատվություն են հանդիսանում ընդերքի տեղամասի ծայրակետերի կոորդինատները և ընդհանուր մակերեսը, տրամադրված օգտակար հանածոյի մարվող պաշարների քանակը՝ ըստ հիմնական և ուղեկից բաղադրիչների, հանքի տարեկան արտադրողականությունը: Միաժամանակ, լիազոր մարմինն իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է նաև մետաղական

օգտակար հանածո արդյունահանող ընդերքօգտագործողների հետ կնքված ընդերքօգտագործման պայմանագրերը և դրանցում կատարվող փոփոխությունները:

3. Նախագծի պարզաբանում I-ում (էջ՝ 12) նշվում է, որ տրամադրված պաշարների քանակը կամ հանքի տարեկան արտադրողականությունը ինքնին առևտրային գաղտնիք հանդիսանալ չեն կարող, քանի որ դրանք հանդիսանում են պետության ընկերությանը տրամադրվող որոշակի իրավունք և դրանք որևէ առնչություն չունեն տնտեսվարող սուբյեկտի, արտադրության կազմակերպման կամ տեխնոլոգիական գործընթացների հետ: Ուստի, թե Հայաստանի Հանրապետության օրենսդրության, և թե տեսական գրականության մեկնաբանությունների լույսի ներքո վերոնշյալ տեղեկությունները առևտրային գաղտնիք դիտարկելը վիճահարույց է:

Մինչդեռ, գտնում ենք, որ վերոնշյալ տեղեկատվությունն առևտրային գաղտնիք հանդիսանալու հարցը վիճահարույց չէ՝ հետևյալ պատճառաբանությամբ. Քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկատվությունը ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք է, եթե այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն և տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար: Իսկ, պաշարների քանակը և հանքի տարեկան արտադրողականությունը օրենքով պաշտպանվող գաղտնիք չէ, ընդհակառակը, այն օրենքի ուժով ենթակա է հրապարկման, ուստի, օրենսդրական տարընկալում այստեղ չկա:

4. Նախագծի առաջարկ IV-ում (էջ՝ 15) նշվում է, որ գործող օրենսդրությունը հնարավորություն չի ընձեռում հրապարակել մետաղական հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն իրականացվող բոլոր ընկերությունների վերաբերյալ տեղեկությունները, եթե վերջիններս չեն բավարարում Հարկային Օրենսգրքի 308-րդ հոդվածով սահմանված պահանջներին: Մետաղական հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն իրականացնող բոլոր ընկերությունների վերաբերյալ տեղեկատվության պարտադիր հրապարակման պահանջ կարող է սահմանվել բացառապես Հարկային Օրենսգրքի 308-րդ հոդվածում համապատասխան լրացում կատարելու պարագայում:

Սակայն անհրաժեշտ է հայտնել, որ Հարկային օրենսգրքի 308-րդ հոդվածը լրացվել է 2018 թվականի մարտի 21-ին «ե.1»-ին ենթակետով, որի համաձայն՝ հարկային մարմինը հարկ վճարողների իրազեկման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ձևով և կարգով հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է՝ մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործող հարկ վճարողների՝ տարվա

արդյունքներով վճարած հարկերի և վճարների ցանկերը, արտահանած ապրանքների ցանկերը՝ արժեքային, բնաիրային և քանակական չափերով:

5. Նախագծի պարզաբանում III-ում (էջ՝ 17) նշվում է. «Կարծում ենք, որ քննարկվող ոլորտին վերաբերող ընկերությունների, ինչպես նաև հարկային մարմնի կողմից ընկերությունների՝ նախորդ տարիների վերաբերող հաշվետվությունների հրապարակման պահանջ սահմանելը /թեպետև հարկային մարմնի պաշտոնական կայքում, ինչպես նաև որոշ ընկերությունների կայքերում հրապարակված են նաև նախորդ տարիների տվյալներ/ ինքնին չի կարող հանդիսանալ անձի իրավական վիճակը որևէ կերպ վատթարացնող կամ իրավունքներն ու ազատությունները սահմանափակող կամ պարտականությունները խստացնող դրույթ:»:

Մինչդեռ, մենք համամիտ չենք նման դիրքորոշման հետ, որովհետև նախորդ տարիների վերաբերյալ հաշվետվություն հրապարակելու պահանջն արդեն իսկ նոր պարտականություն է հանդիսանում տնտեսվարող սուբյեկտի համար, հետևապես անձի իրավական վիճակը վատթարացնող է:

6. Նախագծի պարզաբանում IV-ի (էջ՝ 23) կապակցությամբ ցանկանում ենք տեղեկացնել, որ «Իրավական ակտերի մասին» օրենքն ուժը կորցրած է ճանաչվել 2018 թվականի մարտի 21-ին: Ներկայումս գործում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքը: Ուստի, ներկայացված առաջարկը կարելի է նախատեսել Հայաստանի Հանրապետության բյուջետային օրենսդրությամբ, քանի որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի կարգավորման առարկայի շրջանակից դուրս է:

7. Նախագծի 6-րդ կետի «ԱՌԱՋԱՐԿՆԵՐ» մասում (էջ՝ 19) նշվում է. «Անհրաժեշտ է մշակել ՇՄԱԳ-ում համայնքները ներառելու ուղեցույց, այդ ուղեցույցին տալով իրավական կարգավիճակ: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր համայնք պետք է դիտարկել առանձին-առանձին: Ընկերությունը պետք է հաշվի առնի սահմանված չափանիշները և կոնկրետ համայնքները չներառելու վերաբերյալ ներկայացնի գրավոր հիմնավորում: Ասենք, սահմանվի «հանքից 20 կմ շառավղի սահմաններում գտնվող բոլոր համայնքներ» չափանիշը: Մյուս կողմից, անհրաժեշտ է յուրաքանչյուր դեպքում հաշվի առնել տվյալ վայրի տեղագրությունը (տոպոգրաֆիան) և հիմնավորել տվյալ համայնքը չներառելու որոշումը:»:

Մենք ողջունում ենք ուղեցույց կազմելու առաջարկը, սակայն ցանկանում ենք նշել, որ անհրաժեշտ է չափանիշներ սահմանելիս լինել հետևողական և համայնքի «ազդակիր» լինելու հանգամանքը չպայմանավորել ուղղակի տարածքի գտնվելու վայրով, քանի որ էական հատկանիշը պետք է լինի *համայնքի վրա հնարավոր ազդեցությունը*:

8. Նախագծի նկատառում 1-ում (էջ՝ 48) նշվում է. «Այսինքն, կարգավորման ազդեցության գնահատման ոլորտում, ըստ էության, ԾՕՎ չի իրականացվում, թեպետև ՀՀ օրենսդրությամբ հիշատակվում է դրա իրականացման անհրաժեշտության մասին:»:

Վերոնշյալի կապակցությամբ, ինչպես արդեն նշվել է, 2018 թվականի մարտի 21-ին ընդունվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքը, որի 2-րդ հոդվածի համաձայն՝ կարգավորման ազդեցության գնահատում է հանդիսանում նորմատիվ իրավական ակտի ընդունման արդյունքով հնարավոր փոփոխությունների վերլուծություն, իսկ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին օրենքի նախագծի դեպքում՝ Կառավարության բյուջետային ուղերձով ներկայացված տեղեկատվություն: Ի կատարումն նշված օրենքի՝ Կառավարության որոշմամբ կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը սահմանող մեկ միասնական ակտ պետք է ընդունվի: Գտնում ենք՝ ներկայացված առաջարկները պետք է հաշվի առնել նշված Կառավարության որոշման նախագծում, միաժամանակ, կարծում ենք, որ անհրաժեշտ է հետևողականորեն իրականացնել կարգավորման ազդեցության գնահատման պրակտիկան ինչպես ծախսի և օգուտի, այնպես էլ ցանկացած ոլորտում:

9. Նախագծի 9.2.2-րդ կետում (էջ՝ 58) նշվում է. «Հարկ է նկատի ունենալ, սակայն, որ թեպետև նշված օրենքը սահմանում է, որ վերջինիս գործողությունը տարածվում է շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հնարավոր ազդեցություն ունեցող հիմնադրութային փաստաթուղթ մշակող, ընդունող կամ նախատեսվող գործունեություն իրականացնող սուբյեկտների վրա, որպես գնահատում և փորձաքննություն իրականացնելու սկզբունք հիշատակվում է առողջության, բնականոն ապրելու և ստեղծագործելու համար բարենպաստ շրջակա միջավայր ունենալու մարդու իրավունքը, ամրագրվում է, որ գնահատման և փորձաքննության իրականացման ընթացքում դիտարկվում են նաև ազդեցությունների հետ կապված առողջապահական գործոնները, այնուամենայնիվ Օրենքի 18-րդ հոդվածում, որը սահմանում է շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության գնահատման հաշվետվությունների բովանդակությունը, որևէ խոսք չի գնում հաշվետվության բովանդակության մեջ առողջապահական ազդեցության վերլուծության կամ այդ գործոնները հաշվի առնելու մասին:»:

Անհրաժեշտ է փաստել, որ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ շրջակա միջավայր է համարվում բնական և մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ՝ անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության և մշակույթի հուշարձաններ) և սոցիալական միջավայրի (մարդու առողջության և անվտանգության), գործոնների, նյութերի, երևույթների ու գործընթացների ամբողջությունը և դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջև: Հետևապես,

ինչպես վերոնշյալ սահմանումից, այնպես օրենքի հոդվածների համադրությունից ելնելով՝ անհրաժեշտ է օրենքի 18-րդ հոդվածով նախատեսվող հաշվետվության մեջ ներառվող շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկությունները եզրույթի ներքո հասկանալ նաև մարդու առողջության վերաբերյալ տվյալները: Ուստի, հարցի լուծումն առաջին հերթին պետք է դիտարկել ոչ թե օրենսդրական բարեփոխման միջոցով, այլ պրակտիկայի զարգացմամբ: Այնուամենայնիվ, ցանկանում ենք փաստել, որ օրենքում հետևողականորեն չի իրացվել եզրույթների կիրառումը, և հաճախ օգտագործվում է շրջակա միջավայրի և մարդու առողջության եզրույթը, որը տարակարծություն է առաջացնում, որ մարդու առողջությունը շրջակա միջավայրի մեջ չի ներառվում:

Միաժամանակ, անհրաժեշտ է զարգացնել իրավակիրառ մարմինների կողմից միջազգային պայմանագրերի պահանջներին հետևելու և իրենց գործունեության ընթացքում դրանք ևս հաշվի առնելու պահանջը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ միջազգային պայմանագրերը ևս Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են:

10. Նախագծի նույն 9.2.2-րդ կետի (էջ՝ 61) համաձայն՝ «Կարգում կամ առհասարակ ՀՀ օրենսդրության մեջ առկա չէ որևէ դրույթ փորձաքննական եզրակացության իրավական կարգավիճակի վերաբերյալ: Մինչդեռ, դատական պրակտիկայում վերջինս ճանաչվել է վարչական ակտ չհանդիսացող փաստաթուղթ, որի դեպքում խնդիրներ են առաջանում վերջինիս օրինականության վիճարկման տեսանկյունից: Անհրաժեշտ է նկատի ունենալ, սակայն, որ ՀՀ բնապահպանության նախարարության նախաձեռնությամբ «ՇՄԱԳ և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում առաջարկվել են փոփոխություններ /նախագիծն արդեն ներկայացված է ԱԺ/, ըստ որի լիազոր մարմնի փորձաքննական եզրակացությունը կհանդիսանա վարչական ակտ և վերջինիս բողոքարկման ժամանակ դրա կարգավիճակին վերաբերող իրավական խնդիրներ չեն առաջանա:»:

Մինչդեռ, պետք է փաստել, որ փորձաքննական եզրակացության օրինականության վիճարկման հարցի վերաբերյալ անհրաժեշտ է դրսևորել հետևյալ մոտեցումը՝ ՀՀ օրենսդրությունը փորձագիտական եզրակացության դատական վերանայումն ապահովվում է դրա հիման վրա տրվող թույլտվության վերանայման գործի շրջանակներում: Փորձագիտական եզրակացությունը որպես ապացույց դատարանում գնահատման առարկա դարձնելն այն կառուցակարգն է, որի միջոցով պետությունն ապահովում է դրա իրավաչափության ստուգումը: Դատարանը, գնահատման առարկա դարձնելով փորձագիտական եզրակացությունը դրա թույլատրելիության տեսանկյունից, ստուգում է դրա համապատասխանությունը օրենսդրությանը ինչպես նյութական, այնպես էլ ընթացակարգային առումով: Ուստի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ փորձագիտական եզրակացությունն անմիջականորեն կապված է դրա հիման վրա տրվող

թույլտվության (լիցենզիայի) հետ՝ առավել արդյունավետ կհամարվի փորձագիտական եզրակացության վիճարկումը վերջնական որոշման՝ վարչական ակտի հետ միասին:

11. Նախագծի «ՔՀԿ դատական գործընթաց սկսելու հնարավորությունը» բաժնում (էջ՝ 63) նշվում է. «Արդարադատության մատչելիության իրավունքի իրականացման խոչընդոտները հիմնականում օրենսդրական են: Այսպես, ՀՀ քաղաքացիական և վարչական դատավարության օրենսգրքերով շահագրգիռ ֆիզիկական կամ իրավաբանական անձը կարող է դիմել դատարան իր իրավունքների խախտման դեպքում:»:

Սակայն, գտնում ենք, որ այս դիտարկումն արդարացված չէ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Վարչական դատավարության օրենսգրքի 29.3-րդ գլուխը վերաբերում է հասարակական կազմակերպությունների կողմից իրենց շահառուների օրինական շահերը պաշտպանելու նպատակով դատարան դիմելու իրավունքին: Մասնավորապես, հասարակական կազմակերպությունը իր շահառուների օրինական շահերը դատարանում ներկայացնում է շրջակա միջավայրի պահպանության ոլորտում: Միաժամանակ, ցանկանում ենք ևս մեկ անգամ փաստել, որ շրջակա միջավայր եզրույթին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով լայն ձևակերպում է տրված. «Շրջակա միջավայր՝ բնական և մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ՝ անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության և մշակույթի հուշարձաններ) և սոցիալական միջավայրի (մարդու առողջության և անվտանգության), գործոնների, նյութերի, երևույթների ու գործընթացների ամբողջությունը և դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջև:»:

12. Նախագծի՝ «Առաջարկություն ՇՄՍԱԳ/ՌԲԳ գործընթացում առկա թերությունները վերացման համար օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների վերաբերյալ» բաժնի 6-րդ կետի (էջ՝ 68) համաձայն՝ «Քաղհասարակության՝ դատական գործընթացին մասնակցության ապահովման համար առաջարկվում է քննարկել նաև Գերմանիայի օրենսդրությամբ նախատեսված կարգավորումները Հայաստանի Հանրապետության օրենսդրություն ներմուծելու հարցը»:

Մինչդեռ, նախագծի՝ Գերմանիայի օրենսդրության օրինակում առկա են հետևյալ կարգավորումները.

Կազմակերպությունը, որը դիմում է դատարան, պետք է, ի թիվս այլ պահանջների, բավարարի հետևյալ պայմանները ևս.

«1) շոշափվում են իր կանոնադրությամբ նախատեսված խնդիրներն ու գործունեության ոլորտը, որքանով իր ճանաչումը դրանց է վերաբերում,

2) իրավունք ուներ մասնակցելու 63-րդ հոդվածի 1-ին մասի 2-4-րդ կետերի կամ 2-րդ մասի 5-7-րդ մասերի համաձայն, և նա, ըստ էության, արտահայտվել է դրա վերաբերյալ կամ նրան չի տրվել արտահայտվելու հնարավորություն:»:

Համանման կարգավորում առկա է նաև «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում, մասնավորապես օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն.

«2. Կազմակերպությունն իր շահառուների օրինական շահերը դատարանում ներկայացնում է շրջակա միջավայրի պահպանության ոլորտում:

3. Կազմակերպությունը սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ոլորտից բխող հարցերով կարող է հայց ներկայացնել, եթե՝

1) հայցադիմումը բխում է Կազմակերպության կանոնադրական նպատակներից և խնդիրներից և ուղղված է Կազմակերպության շահառուների՝ Կազմակերպության կանոնադրային նպատակների հետ կապված կոլեկտիվ շահերի պաշտպանությանը.

2) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի շրջանակներում մասնակցել է հիմնադրութային փաստաթղթերի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային քննարկումներին, կամ հանրային քննարկումներին մասնակցելու հնարավորություն չի տրվել, և

3) հայց ներկայացնելու պահին նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում գործունեություն է ծավալել սույն հոդվածի 2-րդ մասում նշված ոլորտում:»:

Ուստի, անհասկանալի է Գերմանիայի օրենքի կարգավորումը ներմուծելու առաջարկը և այն մեկնաբանությունը, որ Գերմանիայի օրենսդրությունը թույլատրում է դատարանում ներկայացնելու հասարակության շահերը, իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը ոչ, այն պայմաններում, երբ ունենք համանման կարգավորումներ:

13. Նախագծի «Առաջարկություն ՇՄՍԱԳ/ՌԲԳ գործընթացում առկա թերությունները վերացման համար օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների վերաբերյալ» բաժնի 6-րդ կետում (էջ՝ 68) նշվում է. «Փոփոխություն կատարել «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում, դրանից հանելով հասարակական կազմակերպությունների կողմից շրջակա միջավայրի պահպանության ոլորտում միայն իրենց շահառուների օրինական շահերը դատարանում ներկայացնելու արգելքը:»:

Ներկայացված առաջարկ ոչ միայն չի կարող լուծել խնդիրը, որի համար ներկայացվում է, այլև հակասում է «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին՝ Կազմակերպությունն իրականացնում է իր կանոնադրական նպատակներից բխող գործունեություն: Կազմակերպության գործունեության նպատակները սահմանվում են նրա կանոնադրությամբ:

Անհրաժեշտ է նշել, որ «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքը բավականին հստակ կարգավորումներ է տվել հատկապես շրջակա միջավայրի

պահպանության ոլորտում հասարակական կազմակերպությունների իրավասությունների մասով: Ինչպես արդեն վերը նշվեց, հասարակական կազմակերպությունը իր շահառուների օրինական շահերը դատարանում ներկայացնում է շրջակա միջավայրի պահպանության ոլորտում: Միաժամանակ, բավականին լայն հասկացություն է ձևակերպված շահառու եզրույթի համար: Մասնավորապես, «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կազմակերպության շահառուներն են նրա կանոնադրությամբ նախատեսված անձինք կամ անձանց խմբերը, ի շահ որոնց իրականացվում է Կազմակերպության գործունեությունը: Այս սահմանումը հնարավորություն է տալիս շրջակա միջավայրի պահպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններին ազդակիր համայնքի կամ շահագրգիռ հասարակության շահերը ներկայացնել դատարանում:

14. Նախագծի «Առաջարկություն ՇՄՍԱԳ/ՌԲԳ գործընթացում առկա թերությունները վերացման համար օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների վերաբերյալ» բաժնի 5-րդ կետում (էջ՝ 67) նշվում է. «Փոփոխություններ նախատեսել ՀՀ ԱԺ կողմից առաջին ընթերցմամբ ընդունված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխում նախ նվազեցնելով 20 համահայցվորի պահանջը և դատարանում խմբային հայցով ներկայացուցիչ լինելու հնարավորություն տալ ոչ միայն իրավապաշտպան հասարակական կազմակերպություններին: Անհրաժեշտ ենք համարում նշել, սակայն, որ խմբային հայցերով դատարան դիմելու ինստիտուտը բավական առաջընթաց է միջազգային ստանձնած պարտավորությունների /Օրհուսի կոնվենցիա/ ապահովման տեսանկյունից և կարելի է անգամ այս ոլորտում փոփոխություններ դեռևս չնախաձեռնել՝ դրանց անդրադառնալով խմբային հայցերով դատարան դիմելու ինստիտուտի կիրառման մոնիթորինգից հետո:»: Սակայն, հասարակական կազմակերպությունների կողմից դատարան դիմելու հնարավորությունը անհրաժեշտ է դիտարկել Հայաստանի Հանրապետության իրավակարգավորումների ամբողջական համատեքստում: Նախ նշենք, որ Քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված խմբային հայցի նշանակությունը կայանում է նրանում, որ միևնույն պահանջ ունեցող անձինք հնարավորություն ունեն միևնույն դատական գործով իրացնել իրենց իրավունքների պաշտպանությունը, օրինակ, ազդակիր համայնքի բնակիչները միևնույն դատական գործի շրջանակներում կարող են ներկայացնել իրենց պահանջը: Միաժամանակ, Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքով նախատեսված դեպքերում այլ անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության համար դատարան դիմելու իրավունք ունեն օրենքով այդպիսի իրավունք կամ լիազորություն ունեցող անձինք: Ինչպես արդեն նշվել է, «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքով հասարակական կազմակերպությանը հնարավորություն է տրված շրջակա միջավայրի պաշտպանության ոլոտում իրենց

շահառուների անունից դիմել դատարանը, հետևաբար, որևէ օրենսդրական արգելք չկա հասարակական կազմակերպության համար ինչպես խմբային հայցերի դեպքում, այնպես էլ ընդհանուր վարույթով դիմել իրենց շահառուների իրավունքների պաշտպանության համար:

Արտակարգ իրավիճակների նախարարություն

Հարգելի պարոն Աղաջանյան

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը «ԱՃԹՆ օրենսդրական և ինստիտուցիոնալ վերլուծություն» ուսումնասիրության նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

Բնապահպանության նախարարություն

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԱՃԹՆ օրենսդրական և ինստիտուցիոնալ վերլուծություն»
ուսումնասիրության նախագծի վերաբերյալ

1. «ԱՃԹՆ օրենսդրական և ինստիտուցիոնալ վերլուծություն» ուսումնասիրության նախագծի (այսուհետ՝ նախագիծ) 1-ին բաժնի
   1) 1-ին պարբերության
      ա. 2-րդ նախադասության «Բնապահպանական և բնօգտագործման վճարների, Բնապահպանական վճարների դրույքաչափերի, Հարկերի, Շահութահարկի մասին ՀՀ օրենքներով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «ՀՀ հարկային օրենսգրքով» բառերով (ողջ տեքստում), քանի որ 2016 թվականի հոկտեմբերի 4-ին ընդունված ՀՀ հարկային օրենսգիրքի 445-րդ հոդվածով ուժը կորցրած են ճանաչվել «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին», «Հարկերի մասին» և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքները, իսկ «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքը 2016 թվականի հոկտեմբերի 4-ին ընդունված ՀՀ հարկային օրենսգիրքի 445-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով ուժը կորցրել է մասնակի: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է հանել «ՀՀ ընդերքի օրենսգրքով» բառերը, քանի որ այն արդեն իսկ հիշատակված է 1-ին նախադասությունում, որպես հանքարդյունաբերության ոլորտը կարգավորող իրավական ակտ,
      բ. 3-րդ նախադասությունը խմբագրման կարիք ունի, քանի որ համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ «**բնապահապանական հարկ**»-ը սահմանված է որպես Հայաստանի Հանրապետությունում կիրառվող պետական հարկատեսակ, բացի այդ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 2017 թվականի դեկտեմբերի 21-ի ՀՕ-269-Ն օրենքով «վճարներ» բառն օրենքի վերնագրում և տեքստում փոխարինվել է «հարկ» բառով, հետևապես նախագծի տեքստում անհրաժեշտ է հղում կատարել «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի դրույթներին,
      գ. 4-րդ նախադասությունը ևս խմբագրման կարիք ունի, քանի որ ՀՀ հարկային օրենսգիրքն արդեն իսկ 2018 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել,

2) 2-րդ պարբերության բովանդակությունն անհրաժեշտ է համապատասխանեցնել ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 19-րդ հոդվածի պահանջներին,

3) 3-րդ պարբերության բովանդակությունն անհրաժեշտ է խմբագրել՝ համապատասխանեցնելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 19-րդ, 32-րդ, 51-րդ հոդվածների պահանջներին,

4) 4-րդ պարբերության բովանդակությունն անհրաժեշտ է խմբագրել՝ հաշվի առնելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 40-րդ և 51-րդ հոդվածների **դրույթները,**

5) **5-րդ պարբերության բովանդակությունն անհրաժեշտ է համապատասխանեցնել ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի** բովանդակությանը:

2. 2-րդ բաժնի

1) 1-ին պարբերությունում և այսուհետ նախագծի ողջ տեքստում «Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի» բառերն անհրաժեշտ է փոխարինել «ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի» բառերով,

2) «**Խնդիր I.**» և «**Առաջարկ I.**» պարբերություններում ընդերքօգտագործման հրապարակայնության հետ կապված օրենսդրական լուծումներն արդեն իսկ ամրագրված են 2018 թվականի մարտի 21-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-191-Ն օրենքում, միաժամանակ «**Առաջարկ I.**» պարբերության 5-րդ ենթապարբերության 5-րդ նախադասության «աշխատանքային կամ արդյունահանման նախագծի» բառերն անհրաժեշտ է փոխարինել «աշխատանքային ծրագրի կամ արդյունահանման նախագծի» բառերով,

3) նախավերջին պարբերության առաջարկն ամրագրված է 2018 թվականի մարտի 21-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրոցումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-191-Ն օրենքի 3-րդ հոդվածում,

4) վերջին պարբերությունում և այսուհետ նախագծի ողջ տեքստում «Տնտեսական մրցակցության մասին» բառերը փոխարինել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» բառերով:

3. 3-րդ բաժնի

1) «*Անրաժեշտ է իրականացնել*» ենթաբաժնի վերջին պարբերության առաջարկն ամրագրված է 2018 թվականի մարտի 21-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրոցումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-191-Ն օրենքի 4-րդ հոդվածում,

2) «*Ընկերությունների կողմից կատարվող վճարումների ներկայացում*» ենթաբաժնի «Շրջակա միջավայրի պահպանության դրամագլուխ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «ՀՀ բնապահպանության նախարարություն» բառերով:

4. 4-րդ բաժնի 1-ին պարբերության բովանդակությունը խմբագրման կարիք ունի, քանի «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը 2018 թվականի մարտի 21-ին ընդունված «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՕ-180-Ն օրենքի 45-րդ հոդվածով ուժը կորցրած է ճանաչվել, հետևապես առաջարկվում է այսուհետ նախագծի ողջ տեքստում հղում կատարել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի համապատասխան հոդվածներին:

5. 6-րդ բաժնում

1) **«ազդակիր համայնք»** հասկացության սահմանման հարցի հետ կապված հարկ է նշել, որ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով հստակ սահմանված է այն:

Բացի այդ, հիմք ընդունելով օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի պահանջները՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից փորձաքննության նախնական փուլում կանխորոշվում են շրջակա միջավայրի վրա հիմնադրութային փաստաթղթի դրույթների և (կամ) նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության շրջանակները, իսկ նույն հոդվածի 8-րդ մասով՝ հայտի ուսումնասիրության արդյունքում՝ ՊՈԱԿ-ի կողմից ձեռնարկողին տրվող տեխնիկական առաջադրանքում ազդակիր համայնքը ամրագրվում է, որը հիմք է հանդիսանում ՇՄԱԳ իրականացման և ՇՄԱԳ հաշվետվության կազմման համար,

2) **«հիմնադրութային փաստաթուղթ»** հասկացության սահմանման հարցի հետ կապված տեղեկացնում եմ, որ հիմնադրութային փաստաթղթերը ենթակա չեն ՇՄԱԳ-ի, այլ համաձայն Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի՝ ենթակա են ռազմավարական գնահատման և փորձաքննության,

3) 5-րդ պարբերության վերաբերյալ հայտնում եմ, որ Ամուլսարի փորձաքննության ընթացքում Ջերմուկ քաղաքը ճանաչվել է ազդակիր համայնք, փորձաքննության ընթացքում ստացվել է Ջերմուկի քաղաքապետի նախնական համաձայնությունը, նաև համայնքի ներկայացուցիչները մասնակցել են հանրային քննարկումներին:

4) «ԱՌԱՋԱՐԿՆԵՐ» ենթաբաժնի բնապահպանական հարկից մասհանումներ ստացող համայնքների ցանկի և այդ համայնքների միջև մասհանումների գումարների բաշխման համամասնությունների հետ կապված տեղեկացնում եմ, որ համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների՝ ՀՀ բնապահպանության նախարարությունը հաշվի առնելով ՀՀ

տարածքային կառավարման և զարգացման նախարարության և ՀՀ մարզպետարանների ներկայացրած առաջարկությունները, կազմում և ՀՀ ֆինանսների ու ՀՀ տարածքային կառավարման ու զարգացման նախարարություններ, ինչպես նաև ՀՀ մարզպետարաններ է ներկայացվում «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածում նշված ընկերություններից յուրաքանչյուրի գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների ցանկը (այն դեպքում, երբ ընկերության գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների թիվը մեկից ավելի է, նաև ընկերության կողմից վճարվող բնապահպանական վճարի գումարի՝ այդ համայնքների միջև բաշխման համամասնությունները և դրանց հաշվարկման սկզբունքները): Հաշվարկման սկզբունքներն են՝

- մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետման մասով համայնքների միջև բնապահպանական հարկի գումարի բաշխման համամասնությունները (%-ով ընդհանուրի նկատմամբ) որոշվում են աղտոտվածության գծով տարածքային նորմավորման նախնական արդյունքների հիման վրա: Համամասնությունները ազդակիր համայնքների միջև բաշխվում են՝ հիմք ընդունելով աղտոտվածության ծավալները և բնակչության թվաքանակը:
- ջրային ռեսուրս վնասակար նյութերի և (կամ) միացությունների արտահոսքերի մասով և ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնները հատուկ հատկացված տեղերում տեղադրման կամ պահման մասով համայնքների միջև բնապահպանական հարկի գումարի բաշխման համամասնությունները սահմանելիս հիմք են ընդունվում համապատասխան համայնքների բնակչության թվաքանակը և նրանց վարչական տարածքում ջրային ռեսուրսի աղտոտման ծավալները:
- համայնքների միջև բնապահպանական վճարի գումարի բաշխման համամասնությունները սահմանվել են՝ հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով մի շարք համայնքների խոշորացումը:

5) «ԱՌԱՋԱՐԿՆԵՐ» ենթաբաժնի 6-րդ պարբերության բովանդակության հետ կապված տեղեկացնում եմ, որ բնապահպանության նախարարության կողմից մշակվել և 2017 թվականի մայիսի 3-ին արդարադատության նախարարության իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական www.e-draft.am կայքում տեղադրվել է «**Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին**» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ

կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում է, որ համայնքների տարածքում շրջակա միջավայրի վրա իրենց գործունեությամբ վնասակար ազդեցություն թողնող ընկերությունների ցանկը, ինչպես նաև մասհանումներ ստացող ազդակիր համայնքների (բնակավայրերի) որոշման և միևնույն ընկերության գործունեության հետևանքով վնասակար ազդեցության ենթարկվող մեկից ավելի համայնքների (բնակավայրերի) միջև օրենքով սահմանված մասհանումների գումարների բաշխման համամասնությունների հաշվարկման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Հետևաբար, նոր հանքերի ի հայտ գալու կամ հանքի սեփականատերերի կազմում փոփոխության պարագայում համապատասխան իրավական ակտում փոփոխություն կատարելը երկար ժամանակ չի պահանջի: Օրենքի նախագծին զուգահեռ ներկայացված են «Համայնքների տարածքում իրենց գործունեությամբ շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցություն թողնող ընկերությունների ցանկը սահմանելու մասին» և «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկերի նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով մասհանումներ ստացող ազդակիր համայնքների որոշման և միևնույն ընկերության գործունեության հետևանքով վնասակար ազդեցության ենթարկվող մեկից ավելի համայնքների միջև սույն օրենքով սահմանված մասհանումների գումարների բաշխման համամասնությունների որոշման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծերը: «Համայնքների տարածքում իրենց գործունեությամբ շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցություն թողնող ընկերությունների ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծում, բացի «**Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին**» ՀՀ օրենքով սահմանված ցանկում ներառված ընկերություններից, ընդգրկված են նաև «Թեղուտ», «Լիդիան Արմենիա», ՓԲԸ-ները, «Կավաշեն» ՍՊԸ-ն և այլ ընկերություններ: Նախագծերը ներկայումս գտնվում են լրամշակման փուլում:

6) «ԱՌԱՋԱՐԿՆԵՐ» ենթաբաժնի 8-րդ պարբերության բովանդակության հետ կապված հայտնում եմ, որ ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի տնօրենի ժ/պ Ա. Ամիրխանյանի 21.11.2017թ. գրությամբ բնապահպանության նախարարությունից պահանջվել է այն համայնքների ցանկը, որոնք 2016 և 2017 թվականների ընթացքում ներկայացրել են բնապահպանական ծրագրեր՝ ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարներից սուբվենցիաներ ստանալու նպատակով, որն էլ ներկայացվել է: Բնականաբար, այդ տեղեկատվությունը չի պարունակում տվյալներ բնապահպանական սուբվենցիաներ ստանալու իրավունք ունեցող համայնքների մասին: Գեղարքունիքի մարզում բնապահպանական սուբվենցիաներ ստանալու իրավունք

ունեցող համայնքների ցանկում է Սոթք բնակավայրը, որը, համայնքների խոշորացման արդյունքում ընդգրկվել է Գեղամասար համայնքում:

7) «ԱՌԱՋԱՐԿՆԵՐ» ենթաբաժնի 10-րդ պարբերության բնապահպանական ծրագրերի հրապարակայնության գործընթացի հետ կապված հայտնում եմ, որ համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի N 197-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի՝ մինչև ծրագրի նախագծային փաստաթղթերի հաստատումը՝ համապատասխան մարմինը 15 օրվա ընթացքում իրազեկում է հասարակությանը՝
    - զանգվածային լրատվության (այդ թվում՝ էլեկտրոնային) միջոցներով (տեղական և հանրապետական ռադիո, հեռուստատեսություն, լրագիր).
    - ծրագրերի և նախագծերի ցուցադրման միջոցառումներով, հրապարակումներով, ինտերնետային կայքերում տեղադրմամբ.
    - հասարակական քննարկումներով:

8) «ԱՌԱՋԱՐԿՆԵՐ» ենթաբաժնի վերջին պարբերության «չկա որևէ դրույթ, որը կապահովի պետության ստացած և 2001թ. օրենքով նախատեսված բնապահպանական վճարների ընդհանուր գումարի ծախսումը բնապահպանական ծրագրերի վրա» բովանդակության վերաբերյալ հայտնում եմ, որ համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 161-րդ հոդվածի՝ բնապահպանական հարկը բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով պետական բյուջե վճարվող հարկ է, իսկ «**Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին**» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված են կոնկրետ միջոցառումները, որոնք կարող են ներառվել համայնքի կողմից բնապահպանական սուբվենցիային հաշվին իրականացվող բնապահպանական ծրագրերում,

9) «ԱՌԱՋԱՐԿՆԵՐ» ենթաբաժնում (էջ 25) դիտարկվում է ֆինանսավորման այլընտրանքային սխեմաներ ունենալու տարբերակներ, որոնց վերաբերյալ տեղեկացնում եմ, որ

    ա. բնապահպանական հարկերից սուբվենցիաներ ստանալու իրավունք ունեցող համայնքների ցանկը, ինչպես նաև այդ համայնքների միջև մասհանումների գումարների բաշխման համամասնությունները (հաշվի առնելով համայնքի բնակչության թիվը և շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանը) առկա են,

    բ. «**Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին**» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ պարբերությունով սահմանված է մասհանումների չափերի որոշման կարգը, որը համայնքներին հնարավորություն է տալիս նախորդ երեք տարվա համար նախատեսված գումարները չօգտագործելու դեպքում՝ օգտագործել ընթացիկ տարում:

6. 7-րդ բաժնի

1) 2-րդ պարբերության 5-րդ նախադասության «ապրիլի 27-ի որոշմամբ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «ապրիլի 27-ի N 445-Ն որոշմամբ» բառերով, իսկ 6-րդ նախադասությունը խմբագրման կարիք ունի, քանի որ ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 19-ի N 1343-Ն որոշմամբ հաստատվել են ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից անցկացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը:
2) «Տեսչական մարմնի գործունեության հիմնական խնդիրներն են» պարբերության 2-րդ կետն անհրաժշտ է շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«2. Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների, բնական ռեսուրսների ոչ բանական օգտագործման կանխարգելիչ կամ նվազեցման միջոցառումների իրականացման վերաբերյալ վերահսկողության ապահովումը,»:

7. 9.1-րդ բաժնի «Բնապահպանական կայունություն» ենթաբաժնի 4-րդ պարբերության 3-րդ նախադասության բովանդակությունն անհրաժեշտ է համապատասխանեցնել ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 28.1-րդ կետի և 69-րդ հոդվածի 3-րդ մասի բովանդակությանը:
8. 9.2-րդ բաժնի
1) 9.2.1-րդ ենթաբաժնի «Օրենսդրական և նորմատիվ ակտերը, որոնք առաջարկվում է փոփոխել, որպեսզի ԾՕՎ-ն ընդգրկի հանքարդյունաբերական նախագծերի վերաբերյալ որոշումներ կայացնելու գործընթացի մեջ» և «ԾՕՎ-ի հետ կապված ինստիտուցիոնալ կարողությունների խնդիրները, որոնք առաջարկվում է ընդգրկել պատասխանատու հանքարդյունահանման նախնական ճանապարհային քարտեզում» պարբերություններում առաջարկվում է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով սահմանված պարտադիր փորձաքննություններից բացի ամրագրել նաև «տնտեսական գնահատում՝ ԾՕՎ կիրառմամբ» փորձաքննությունը, միաժամանակ առաջարկվում է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության համապատասխան ստորաբաժանման հենքի վրա իրականացնել հանքարդյունաբերության ոլորտում ներդրումների տնտեսական գնահատում, ինչի անհրաժեշտությունը չկա, քանի որ՝
   - ընդերքաբանական փորձաքննության ժամանակ իրականացվում է տեխնիկատնտեսական ցուցանիշների գնահատում,
   - համաձայն «**Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին**» **ՀՀ օրենքի, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 30-ի N249-Ն հրամանի և** ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29-ի նիստի N29 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած ուղեցույցների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում

իրականացվում է նախատեսվող գործունեության իրականացման այլընտրանքային, այդ թվում՝ զրոյական (գործունեության իրականացման բացառում) տարբերակների դիտարկում (հաշվի առնելով ծրագրի համար տնտեսական, ֆինանսական, տեխնոլոգիական, անվտանգության և ապահովության, բնապահպանական և սոցիալական նկատառումները),

- կազմակերպություններն իրենք են իրականացնում տնտեսական գնահատում բիզնես ծրագրերի մշակման ժամանակ և շուկան այդ խնդիրները կարգավորում է,

2) 9.2.2-րդ ենթաբաժնի

ա. վերնագրի և բովանդակության «ռազմավարական բնապահպանական գնահատում» եզրույթն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիայի (Էսպո 1991թ.) ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին արձանագրության դրույթներին,

բ. օրենսդրական փոփոխությունների հետ կապված հայտնում եմ, որ ՄԱԿ-ի ԵՏՀ քարտողարության աջակցությամբ մշակվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետությնա օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը, որում իրականացվել է ՀՀ կողմից վավերացրած կոնվենցիաների համապատասխանեցում, մասնավորապես «Անդրսահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիային, դրան կից ռազմավարական էկոլոգիական գնահատման արձանագրությանը և ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին« կոնվնցիային /Օրհուս/,

գ. 3-րդ և «**Համայնքի առողջության վրա ազդեցության գնահատման կարգավորումներ**» պարբերություններով ներկայացվում է Օրենքի 18-րդ հոդվածի մեկնաբանությունը, ինչի վերաբերյալ հայտնում եմ, որ Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ներկայացված է «շրջակա միջավայր» հասկացությունը, որում ներառված են և մարդու առողջությունը, և շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչները, հետևապես Օրենքի 18-րդ հոդվածով օգտագործվում է միայն «շրջակա միջավայր» հասկացությունը՝ իր մեջ ներառելով Օրենքով սահմանված բոլոր բաղադրիչները,

դ. ՇՄԱԳ մեթոդիկաների առկայության հետ կապված հայտնում եմ, որ ՀՀ կառավարության 2016 թվականի հուլիսի 29 N 29 արձանագրային որոշմամբ

հավանության են արժանացել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրույթների կիրարկման հետևյալ ուղեցույցները՝

- **օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման իրավունքներ հայցելու համար ներկայացվող** շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի կազմման.
- **օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման իրավունքներ հայցելու համար ներկայացվող** շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման հաշվետվության կազմման.
- հանքի փակման ծրագրի կազմման.
- **օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման իրավունքներ հայցելու համար ներկայացվող շրջակա միջավայրի վրա գումարային ազդեցության** գնահատման հաշվետվության կազմման.
- **օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման իրավունքներ հայցելու համար ներկայացվող սոցիալ-տնտեսական ազդեցության** գնահատման հաշվետվության կազմման.
- օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության և արդյունահանման իրավունքներ հայցելու համար ներկայացվող շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման հաշվետվության լիարժեքության գնահատման:

Հետևապես անհրաժեշտ է «Հաշվետվությունների պատրաստման գործընթաց և հաշվետվությունների պետական փորձաքննություն», «Հանքարդյունաբերական ծրագրերի՝ համայնքի առողջության վրա ազդեցության գնահատման վերաբերյալ միջազգային լավագույն փորձը», «*Առաջարկություն ՇՄՍԱԳ/ՌԲԳ գործընթացում առկա թերությունները վերացման համար օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների վերաբերյալ*» պարբերությունների ու 9.3-րդ բաժնի «2. Շրջակա միջավաիրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին, ներառելով սոցյալական գնահատումը» աղյուսակի 2.1-րդ, 2.4-րդ և 2.5-րդ կետերի բովանդակությունն անհրաժեշտ է խմբագրել՝հաշվի առնելով վերոնշյալ մեթոդիկաների առկայությունը,

ե. ընդերքօգտագործման թույլտվություններում էական պայմանների փոփոխության, լեռահատկացման ակտով ամրագրված կոորդինատների փոփոխության ու գրանցման հետ կապված լրացուցիչ ՇՄԱԳ ընթացակարգի վերաբերյալ հարկ է նշել, որ

բնապահպանության նախարարության կողմից մշակված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետությնա օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում ամրագրվել է դրույթ հետևյալ բովանդակությամբ.

«շրջակա միջավայրի վրա ազդեցություն ունեցող ցանկացած նախագծային փոփոխություն ենթակա է փորձաքննության»,

զ. «**Հաշվետվությունների պատրաստման գործընթաց և հաշվետվությունների պետական փորձաքննություն**» պարբերությունով առաջարկվում է առողջապահության նախարարության եզրակացությունը կամ կարծիքը դրական համարելու փոխարեն սահմանված ժամկետում, եթե կարծիք կամ եզրակացություն չի տրամադրվում, ապա փորձաքննական եզրակացությունը պետք է տրամադրել առանց վերոնշյալ ազդեցությունը հաշվի առնելու, սակայն կարծում ենք, որ սա սխալ առաջարկ է, քանի որ մարդու վրա ազդեցությունը հաշվի է առնված մթնոլորտային օդի, ջրի սահմանային թույլատրելի նորմերը սահմանելիս, իսկ փորձաքննական գործընթացում խստագույնս ստուգվում են համապատասխանությունը նշված թույլատրելի նորմերին,

է. «**Հասարակության մասնակցություն ՇՄՍԱԳ/ՌԲԳ գործընթացին**» պարբերությունում ներկայացվում են գործնականում առավել հաճախ հանդիպող թերությունների մասին կապված՝ հանրային քննարկման համար անհրաժեշտ փաստաթղթերի ոչ ամբողջական տրամադրման, որոշակի տեղեկատվության չհրապարակման, ազդակիր բնակչության կողմից բարձրացված հարցադրումներին ոչ ամբողջական պատասխանների տրամադրման կամ դրանք թերի կերպով ՇՄԱԳ-ում ընդգրկման, հանրային մտահոգություններին անդրադարձ չկատարելու հետ: Նշված ձևակերպումը չի համապատասխանում իրականությանը, քանի որ փորձաքննության փուլերում հանրային քննարկման համար անհրաժեշտ ծանուցումը և փաստաթղթերը ամբողջությամբ տեղադրվում է բնապահպանության նախարարության պաշտոնական կայքում, ծանուցումը տպագրվում է նաև ՀՀ պաշտոնաթերթում, հանրության կողմից բարձրացված բոլոր հարցադրումներին տրվում է բանավոր կամ գրավոր պատասխան,

ը. «Առաջարկություն ՇՄՍԱԳ/ՌԲԳ գործընթացում առկա թերությունները վերացման համար օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների վերաբերյալ» պարբերությունում բարձրացված հարցադրումներին անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է՝ նկատի ունենալով, որ սույն պարբերությունում բարձրացված խնդիրների լուծման նպատակով առաջարկների վերաբերյալ հարցադրումներին արդեն իսկ առաջարկությունների և առարկությունների վերոշարադրյալ կետերում պարզաբանվել են,

3) 9.2.3-րդ ենթաբաժնի

ա. 5-րդ պարբերությունն անհրաժեշտ է լրացնել «ՀՀ կառավարության 2018 թվականի հունվարի 25-ի N 3 արձանագրային որոշմամբ հավանության

արժանացած Շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի զարգացման հայեցակարգը» բառերով, իսկ 6-րդ պարբերության բովանդակությունն անհրաժեշտ է համապատասխանեցնել ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 15-ի N 1277-Ն որոշման 3-րդ կետի բովանդակությանը,

բ. 9-րդ պարբերության 1-ին նախադասությունն անհրաժեշտ է շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշմամբ սահմանվել է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:»,

գ. «**Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին**» պարբերության 3-րդ ենթապարբերության 1-ին և 2-րդ նախադասությունների բովանդակությունները խմբագրման կարիք ունեն, քանի որ ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 30-ի N 1588-Ն որոշմամբ կարգավորվում են նորաստեղծ տեսչական մարմնի բնականոն գործունեության հետ առնչվող հարցերը, իսկ ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 19-ի N 1343-Ն որոշմամբ հաստատվել են ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից անցկացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը:

9. 9.3-րդ բաժնի **«1.Տնտեսական գնահատման գործիքների բարելավում. Ծախս օգուտ վերլուծության (ԾՕՎ-ի) ներածումը»** աղյուսակի 1.1-1.7-րդ տողերն անհրաժեշտ է հանել (տես նախագծի վերաբերյալ առաջարկությունների և առարկությունների 8-րդ կետը):

10. Նախագծից անհրաժեշտ է հանել 1-ին և 2-րդ հավելվածները, քանի որ 2018 թվականի մարտի 21-ին ընդունվել են «**Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին**» ՀՕ-191-Ն, «**Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին**» ՀՕ-192-Ն և «**Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին**» ՀՕ-193-Ն օրենքները:

11. Նախագծի 3-րդ հավելվածի «IV. Պայմանագրեր» բաժնի 2-րդ պարբերության 2-րդ կետն անհրաժեշտ է շարադրել այնպես, որպեսզի նրանում հաշվի առնվեն ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 22-ի N 437-Ն որոշմամբ հաստատված պայմանագրերը:

Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն

Դիտարկումները ներկայացված են առանձին ֆայլով՝ track change-երի և մեկնաբանությունների տեսքով:

Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

Առաջարկություն

1. ԱՃԹՆ օրենսդրական և ինստիտուցիոնալ վերլուծության նախագծի 5-րդ գլխի *Արտաբյուջետային հաշիվներ* (այդ թվում՝ համայնքային) բաժնի *Առաջարկ VI.*-ում առաջակում ենք հանել <«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում> բառերը, քանի որ խնդիրը վերոգրյալ օրենքի կարգավորման առարկա չէ:

   Ելնելով վերոգրյալից անհրաժեշտ է նաև <ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԻՑ> հանել նաև <«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը:

2. Նախագծի 3-րդ գլխի IV-րդ կետի <Անրաժեշտ է իրականացնել> բաժնի 2-րդ պարբերությունում անհրաժեշտ է հանել <«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում> բառերը, քանի որ օրենսդրական փաթեթում արդեն իսկ փոփոխություն է արվել <Ընդերքի մասին> ՀՀ օրենքում:

   Նույն սկզբունքով անհրաժեշտ է փոփոխություն կատարել նաև N 1 հավելվածի վերնագրում և հիմնավորման մեջ:

Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն

Հարգելի պարոն Աղաջանյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի հանձնարարականի՝ «Աջակցություն Հայաստանի կարողությունների բարելավմանը՝ ԱՃԹՆ իրագործելու և ընդերքօգտագործման թույլտվությունների ու պայմանագրերի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման նպատակով» ծրագրի շրջանակներում մշակված օրենսդրական և ինստիտուցիոնալ վերլուծության (այսուհետ՝ Վերլուծություն) վերաբերյալ՝ հայտնում ենք հետևյալը.

- «Հանքարդյունաբերության ոլորտը կարգավորող իրավական և հարկային ռեժիմները» բաժնում սահմանվում են այն իրավական ակտերը, որոնցով կարգավորվում է ընդերքօգտագործման հարկաբյուջետային ոլորտը: Այս առումով առաջարկում ենք խմբագրել նշված մասը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նոր հարկային օրենսգրքի ընդունմամբ պայմանավորված «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին», «Հարկերի մասին», «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» (բացառությամբ օրենքի 3-րդ հոդվածի «բ» կետի, որը գործում է մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ) և «Շահութահարկի մասին» (բացառությամբ օրենքի 8-րդ և 11-րդ հոդվածների նախավերջին պարբերություններով «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հավաստագրված ռեզիդենտներին վերաբերող դրույթների, որոնք գործում են մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ) ՀՀ օրենքներն ուժը կորցրած են ճանաչվել ս.թ. հունվարի 1-ից:
- 13-րդ էջի Առաջարկ II-ում առաջարկում ենք «Տնտեսական մրցակցության մասին» բառերը փոխարինել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» բառերով:
- 19-րդ էջի Առաջարկ VI –ում առաջարկում ենք «Իրավական ակտերի մասին» բառերը փոխարինել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» բառերով:

- 47-րդ էջի «Տնտեսական գնահատում. ծախսերի և օգուտների վերլուծություն. Կարգավորումները ՀՀ օրենսդրության մեջ» բաժնում առաջարկում ենք կատարել համապատասխան փոփոխություններ՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ 2018 թվականի մարտի 21-ին ընդունվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը, որի համաձայն ըստ բնագավառների՝ կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը, ժամկետները և դեպքերը, իսկ դրա արդյունքում տրվող եզրակացությանը ներկայացվող պահանջները պետք է սահմանվեն ՀՀ կառավարության կողմից:

Նշված օրենքի ընդունմամբ ուժը կորցրած է ճանաչվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը, հետևաբար և դրանից բխող՝ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մրցակցության բնագավառներում կարգավորման ազդեցության գնահատման կարգերը սահմանող ՀՀ կառավարության 2009 թվականի № 1159-Ն և № 1237-Ն որոշումները:

Ըստ այդմ, ներկայումս կարգավորման ազդեցության գնահատում չի իրականացվում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նոր օրենքով նախատեսված կառավարության կողմից սահմանվելիք կարգերը դեռևս բացակայում են: Միաժամանակ, ներկայումս շրջանառության մեջ է գտնվում ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին» և «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկերը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծը, որում ներառված է նաև միջոցառում՝ «Ըստ բնագավառների՝ կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը, ժամկետները և դեպքերը, դրա արդյունքում տրվող եզրակացությանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի N 1205-Ն, ՀՀ կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 29-ի N 1237-Ն, ՀՀ կառավարության 2009 թվականի օգոստոսի 13-ի N 921-Ն, ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 10-ի N 1021-Ն, ՀՀ

կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 23-ի N 1104-Ն, ՀՀ կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 15-ի N 1159-Ն և ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 18-Ն որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելու մասին, որի վերաբերյալ ՀՀ ՏՋՆՆ-ն ներկայացրել է իր դիրքորոշումը ՀՀ արդարադատության նախարարությանը:

Միաժամանակ, հայտնում ենք նաև, որ ներդրումային ծրագրերի տնտեսական գնահատում իրականացնելու վերաբերյալ որոշում կայացնելու պարագայում անհրաժեշտ է լինելու համապատասխան լրացումներ կատարել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում, քանի որ վերջինիս համաձայն ներկայումս կարգավորման ազդեցության գնահատումը՝ նորմատիվ իրավական ակտի ընդունման արդյունքով հնարավոր փոփոխությունների վերլուծություն է և օրենքով, ըստ էության, ներկայումս ներդրումային ծրագրերը ենթակա չեն կարգավորման ազդեցության գնահատման:

- Վերլուծության 56-րդ էջում «Օրենսդրական և նորմատիվ ակտերը, որոնք առաջարկվում է փոփոխվել, որպեսզի ԾՕՎ-ն ընդգրկի հանքարդյունաբերական նախագծերի վերաբերյալ որոշումներ կայացնելու գործընթացի մեջ» բաժնում ներառված «Ըստ անհրաժեշտության ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի հրամանով կամ ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ ԾՕՎ մեթոդական ուղեցույցին հավանություն տալու մասին որոշման/հրամանի ընդունում» միջոցառման վերաբերյալ հայտնում ենք, որ վերջինս, ըստ էության, կարող է քննարկման առարկա դառնալ միայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխություններ կատարելուց հետո, քանի որ ներկայումս օրենքի համաձայն ԿԱԳ-ի ենթակա են միայն նորմատիվ իրավական ակտերը: Նույնը վերաբերում է նաև Վերլուծության 9.3 «Պատասխանատու հանքարդյունաբերության որոշակի խնդիրների վերաբերյալ նախնական ճանապարհային քարտեզ» բաժնի «Տնտեսական գնահատման գործիքների բարելավում. Ծախս օգուտ վերլուծության (ԾՕՎ-ի) ներածումը» կետին, քանի որ եթե տվյալ պարագայում «Ծախս օգուտ վերլուծություն»-ը դիտարկվում է որպես կարգավորման ազդեցության գնահատման գործընթացի բաղկացուցիչ մաս, ապա վերջինս պետք է քննարկվի վերոնշյալ օրենսդրական փոփոխությունների կատարման նպատակահարմարության վերաբերյալ քննարկումների շրջանակներում՝ այլ շահագրգիռ մարմինների հետ համատեղ:

Ֆինանսների նախարարություն

Հարգելի պարոն Աղաջանյան

ՀՀ ֆինանսների նախարարությունը ուսումնասիրել է Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերություն կենտրոնի կողմից մշակված «Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) օրենսդրական և ինստիտուցիոնալ վերլուծություն» ուսումնասիրության նախագիծը, որի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը:

Նախագծով առաջարկվում է սահմանել, որ հարկային մարմինը հարկ վճարողների իրազեկման նպատակով ՀՀ կառավարության սահմանած ձևով և կարգով հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է նաև հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն իրականացնող ընկերությունների վերաբերյալ տեղեկատվություն: Միաժամանակ, առաջարկվում է սահմանել, որ ընդերքօգտագործման հետ կապված գործունեության վերաբերյալ լիազոր մարմնին և ՀՀ կառավարության աշխատակազմ հրապարակային հաշվետվություն ներկայացնելու պարտավորություն ունեցող իրավաբանական անձանց կողմից հաշվետվությունը սահմանված ժամկետում չներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում կազմակերպության պաշտոնատար անձանց նկատմամբ: Այդ կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ վերոնշյալ հարցերի կարգավորման նպատակով Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերություն կենտրոնի կողմից մշակվել և սահմանված կարգով շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում» փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնք ՀՀ Ազգային Ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել են ս.թ. մարտի 21-ին և ուժի մեջ մտել ս.թ. ապրիլի 7-ին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք նախագծից հանել վերոնշյալ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկները, հիմնավորումները, ինչպես նաև նախագծի 1-ին և 2-րդ հավելվածները:

Նախագծի «Իրական շահառուների բացահայտում» բաժնում մետաղական հանքարդյունաբերության ոլորտում իրական շահառուների բացահայտման նպատակով առաջարկվում է բաժնետոմսերի և բաժնեմասերի օտարման գործարքները բերել հարկային դաշտ: Միաժամանակ, առաջարկվում է յուրաքանչյուր ռեզիդենտին հնարավորություն տալ իր կյանքի ընթացքում որոշակի գումարի սահմաններում չվճարել իրեն պատկանող բաժնեմատոմսերի կամ բաժնեմասերի վաճառքից գոյացող հարկերը: Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ վերոնշյալ խնդրի կարգավորման համար առավել խելամիտ է մշակել այլ միջոցներ, որոնք չեն խոչընդոտի կապիտալի շուկայի ձևավորմանը և կայացմանը ՀՀ-ում:

Նախագիծը մշակվել է 2017 թվականին, ինչի կապակցությամբ նախագծում պարբերաբար նշվում է, որ ՀՀ հարկային օրենսգիրքը ուժի մեջ կմտնի 2018 թվականի հունվարի 1-ից: Այդ կապակցությամբ առաջարկում ենք ամբողջ նախագծում «ՀՀ հարկային օրենսգիրքը ուժի մեջ կմտնի» արտահայտությունը փոխարինել «ՀՀ հարկային օրենսգիրքը ուժի մեջ է մտել» արտահայտությամբ:

Նախագծի «Հանքարդյունաբերության ոլորտը կարգավորող իրավական և հարկային ռեժիմները» բաժնի 13-րդ պարբերությունը (6-րդ էջ) առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Մետաղական հանքարդյունաբերության ոլորտում հիմնական հարկատեսակներն ու վճարներն են՝

բնօգտագործման վճար (այդ թվում՝ ռոյալթի)

շահութահարկ

եկամտային հարկ:»

Նախագծում պարբերաբար անդրադարձ է կատարվում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքին: Մինչդեռ հարկ է նշել, որ ս.թ. ապրիլի 7-ից ուժի մեջ է մտել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը, որով նաև ուժը կորցրած է ճանաչվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում վերանայելու

նախագծում արտացոլված և վերոնշյալ օրենքով սահմանված իրավակարգավորումները (մասնավորապես 17-րդ և 19-րդ էջեր):

Նախագծում հղում է կատարվում «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքին, մինչդեռ գործում է «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը: Այդ կապակցությամբ առաջարկում ենք նախագծում կատարել համապատասխան փոփոխություններ (18-րդ, 19-րդ և 94-րդ էջեր):

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով

ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

«ԱՃԹՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ» ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Նախագծով առաջարկվում է ձևավորել կենտրոնացված ռեեստր, որը կպարունակի ամփոփ տեղեկատվություն ընկերության վերաբերյալ: Այդ առնչությամբ, կարևորում ենք իրական շահառուների բացահայտման գործընթացում ՀՀ արդարադատության նախարարության (իրավաբանական անձանց պետական գրանցման գործակալություն) և իրավասու այլ մարմինների (ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն և այլն) ու կազմակերպությունների (Կենտրոնական դեպոզիտարիա) համագործակցության ձևաչափերի սահմանումը և դրանց կոնկրետացումը՝ կապված տվյալների փոխանցման հետ:

2. Նախագծում վկայակոչված են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի դրույթները, մինչդեռ ներկայումս գործում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը: Նշված հանգամանքով պայմանավորված, անհրաժեշտ է հաշվի առնել գործող օրենսդրական կարգավորումները:

Կենտրոնական բանկ

Հարգելի պարոն Աղաջանյան

Ձեզ ենք ներկայացնում «Աջակցություն Հայաստանի կարողությունների բարելավմանը՝ ԱՃԹՆ իրագործելու և ընդերքօգտագործման թույլտվությունների ու պայմանագրերի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման նպատակով» ԱՃԹՆ օրենսդրական և ինստիտուցիոնալ վերլուծության վերաբերյալ ՀՀ Կենտրոնական բանկի դիտողություններն ու առաջարկությունները.

○ Վերլուծության «Իրական շահառուների բացահայտում» 8–րդ գլխի 1-ին կետում ներկայացված հիմնախնդիրը հասկանալի չէ: Մասնավորապես, հիմնախնդիրը վերաբերում է հաշվետվություն տրամադրող անձանց կողմից իրական շահառուների բացահայտման գործընթացին, մինչդեռ առաջարկվող լուծումը՝ պետական մարմինների կողմից գրանցման գործընթացում իրական շահառուների բացահայտմանը: Այս առումով անհրաժեշտ է հիմնախնդիրը վերաձևակերպել իբրև պետական մարմինների կողմից իրական շահառուի բացահայտման խնդիր:

Ինչ վերաբերում է հաշվետվություն տրամադրող անձանց, այդ թվում՝ ներդրումային ընկերություններին, ապա «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ վերջիններս պարտավոր են իրավաբանական անձի իրական շահառուին պարզելու նպատակով լիարժեք տեղեկատվություն ունենալ այդ իրավաբանական անձի մասնակիցների (բացառությամբ հաշվետու թողարկողների) վերաբերյալ: Նշվածից բացի, բարդ կառուցվածք ունեցող իրավաբանական անձինք ՀՀ ԿԲ խորհրդի 2014թ.-ի հոկտեմբերի 7-ի թիվ 279-Ն որոշման Հավելվածի 27-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն բարձր ռիսկի չափանիշ են, որի դեպքում 33-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հաշվետվություն տրամադրող անձը պարտավոր է պահանջել ներկայացված տեղեկությունների իսկությունը ստուգող փաստաթղթեր: Իբրև նշված դրույթների կիրառությունն ապահովող մեխանիզմ, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք 27-րդ հոդվածով նախատեսված է հաշվետվություն տրամադրող անձի կողմից գործարքը կամ գործարար հարաբերությունը մերժելու կամ դադարեցնելու հնարավորությունը: Նշված հոդվածի համաձայն՝ հաշվետվություն տրամադրող անձը պարտավոր է մերժել գործարքի կատարումը կամ գործարար հարաբերության հաստատումը, եթե հնարավոր չէ իրականացնել հաճախորդի պատշաճ ուսումնասիրության միջոցառումները, այդ թվում՝ տեղեկությունների իսկությունը ստուգող փաստաթղթերի ներկայացմամբ իրավաբանական անձի իրական շահառուին պարզումը:

- 2-րդ կետում նշված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի միջև հակասություն կարծում ենք առկա չէ, քանի որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» 52-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ռեեստրում գրառման մերժում թույլատրվում է օրենքով և իրավական ակտերով սահմանված դեպքերում:
- 3-րդ կետում անհրաժեշտ է հստակեցնել, որ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հաշվառման հասցեի վերաբերյալ տեղեկատվություն պահանջվում է միայն առկայության դեպքում:
- Առաջարկում ենք 4-րդ կետը հանել կամ վերաձևակերպել, քանի որ Կենտրոնական դեպոզիտարիան սահմանում է, թե ինչպես հաշվի օպերատորներն իրականացնեն հաճախորդի ուսումնասիրությունը:
- 8-րդ գլխի 5-րդ կետում անհրաժեշտ է փոխել 2-րդ նախադասությունը, քանի որ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ի թիվ 20-Ն որոշման մեջ 2016թ.-ին կատարված փոփոխություններով «տեղեկություն չունեմ» դաշտը հանվել է:
- 6-րդ կետում ոչ կորպորատիվ պայմանագրային ֆոնդի իրական շահառուի բացահայտման առնչությամբ ներկայացված հիմնախնդիրը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի:
- Կարծում ենք, որ 7-րդ կետում նշված հիմնախնդիրը անհրաժեշտ է հանել, քանի որ տվյալ պարագայում խնդիրը ոչ թե ընկերության կողմից իր կանոններին հետևելու կամ չհետևելու մեջ է, այլ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ՀՀ օրենսդրության պահանջների պահպանման մեջ: Բնականաբար առևտրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների միջև պետք է մրցակցություն լինի: Ինչ վերաբերում է օրենսդրության պահանջների պահպանման շրջանակներում գործելաոճ ընտրելուն, դա ապահովվում է բոլոր ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ իրականացվող համաչափ/ համասեռ վերահսկողությամբ:
- Առաջարկում ենք 10-րդ կետը հանել, քանի որ բաժնետոմսերով կնքվող գործարքները թափանցիկ են և բոլոր սեփականատերերը գրանցվում են Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից: Բացի այդ, բաժնետոմսերով գործարքների հարկումը հակասում է արժեթղթերի շուկայում ներկայումս կիրառվող հարկային քաղաքականության սկզբունքներին: Ըստ այդմ, պետք է հանել նաև համապատասխան առաջարկությունը:
- Առաջարկում ենք վերլուծության 8-րդ գլխի 11-րդ կետում խմբագրել «մասնագիտացված օպերատոր» բառերի փոխարեն «մասնագիտացված հաշվի օպերատոր» բառերով:
- Առաջարկում ենք վերլուծության բաժին 8. «Իրական շահառուների բացահայտում» -ի ԱՌԱՋԱՐԿԵՐ գլխի առաջին կետից հանել «վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների» բառերը, քանի որ վճարահաշվարկային կազմակերպությունները չեն գրանցվում ՀՀ ԿԲ կողմից, այլ միայն լիցենզավորվում են: Նշանակալից մասնակցության նորմերը վճարահաշվարկային կազմակերպությունների վրա չեն տարածվում:

- Առաջարկում ենք վերլուծության բաժին 8. «Իրական շահառուների բացահայտում» -ի ԱՌԱՋԱՐԿԵՐ գլխի երկրորդ կետում «սահմանդիր» բառը փոխարինել «հիմնադիր» բառով:
- Ամբողջ գլխում առաջարկում ենք «ՓԼԱՖ Օրենք» արտահայտությունը փոխել «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին ՀՀ օրենք» արտահայտությամբ:
- Առաջարկում ենք ուսումնասիրությունը ավելի լիարժեք լինելու նպատակով ուսումնասիրել նաև ընդերքօգտագործման ոլորտում իրական շահառու բացահայտելու միջազգային փորձ, նկատի ունենալով որ վերլուծության հիմքում ընկած ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրությամբ սահմանված մեխանիզմները նախատեսված են իրական շահառու բացահայտելու այլ նպատակներով, որոնք միշտ չէ, որ կիրառելի են ընդերքօգտագործման ոլորտում:
- Առաջարկում ենք նաև, որպես ոլորտում գործող կազմակերպությունների գործունեության թափանցիկությունը ապահովելու գործիք կիրառել պարտադիր արտաքին աուդիտ անցնելու պարտականություն:

Պետական եկամուտների կոմիտե

Հարգելի պարոն Աղաջանյան

Հանձնարարականին կից ներկայացված՝ «ԱՃԹՆ օրենսդրական և ինստիտուցիոնալ վերլուծություն» ուսումնասիրության նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ հայտնում ենք հետևյալը:

1. Նախագծի 3-րդ կետով առաջարկվում է մետաղական հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն իրականացնող բոլոր ընկերությունների վերաբերյալ տեղեկատվության պարտադիր հրապարակման պահանջ սահմանել ՀՀ հարկային օրենսգրքի 308-րդ հոդվածում: Այնինչ, ՀՀ հարկային օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասում արդեն իսկ կատարվել են համապատասխան լրացումներ, որոնք ուժի մեջ են մտել 2018թ. ապրիլի 7-ին (21.03.2018թ. ՀՕ-193-Ն): Մասնավորապես, սահմանվել է, որ հարկային մարմինը հարկ վճարողներին իրազեկման նպատակով ՀՀ կառավարության սահմանած ձևով և կարգով հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում մինչև հարկային տարվան հաջորդող հարկային տարվա հուլիսի 1-ը ներառյալ հրապարակում է մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործող հարկ վճարողների՝ տարվա արդյունքներով վճարած հարկերի և վճարների ցանկերի, արտահանած ապրանքների ցանկերի՝ արժեքային, բնաիրային և քանակական չափերի վերաբերյալ տեղեկատվություն:

2. Նախագծի 5-րդ կետը հստակեցման կարիք ունի, քանի որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով ուժը կորցրած է ճանաչվել «Իրավական ակտերի մասին» ՀՕ-320 օրենքը:

3. «Հանքարդյունահանման ոլորտը կարգավորող իրավական և հարկային ռեժիմները» բաժնում առաջարկվում է կատարել հետևյալ լրացումները.

1) «Մետաղական հանքարդյունաբերության ոլորտում հիմնական ուղղակի հարկատեսակներն ու վճարներն են» մասը (6-րդ էջ) լրացնել նոր ենթապարբերությամբ հետևյալ բովանդակությամբ.

ա. «- պետական տուրք - ԱՏԳ ԱԱ 26 ապրանքային խմբին դասվող հանքաքարերի արտահանման սերտիֆիկատ տալու համար (յուրաքանչյուր անգամ արտահանվող հանքաքարի տվյալ ծավալում մետաղի պարունակության և դրա միջազգային շուկայական միջին գնի հիման վրա հաշվարկված արժեքի 3 տոկոսի չափով:»,

բ. «Մետաղական հանքարդյունաբերության ոլորտում հիմնական ուղղակի հարկատեսակներն ու վճարներն են» մասում «անձնական եկամտային հարկ» ենթապարբերությունը լրացված է թերի,

2) «2016 և 2017 թվականների համար այս հարկերի ու վճարների համար հիմք են ծառայել հետևյալ օրենքները» նախադասությունը (6-րդ էջ) լրացնել նոր երկու ենթապարբերություններով հետևյալ բովանդակությամբ՝

«- Թափոնների մասին» ՀՀ օրենք,

«- Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք:

Գեղարքունիքի մարզպետարան

Հարգելի՛ պարոն Աղաջանյան

Մարզպետարանի աշխատավազմում ուսումնասիրվել է Ձեր կողմից ներկայացված «ԱՃԹՆ օրենսդրական և ինստիտուցիոնալ վերլուծություն» ուսումնասիրության նախագիծը,որի վերաբերյալ ներկայացվում է դիտարկումներ և առաջարկություններ:

Չկա հստակ սահմանում ազդակիր համայնքի որոշման համար, որի սահմանման դեպքում պետք է հաշվի առնել բոլոր այն հանգամանքները ,որոնք առաջ կբերեն տվյալ համայնքի վարչական տարածքի էկոհամակարգի ցանկացած փոփոխություն և կազդեն բնակչության առողջական վիճակի վրա: Այս պարագայում ճշգրտել ազդակիր համայնքին տրվելիք դոտացիաների չափի հաշվարկների հիմնավորումը:

Կնքված պայմանագրերում արդյունահանողների կողմից համայնքների նկատմամբ իրենց ստանձնած պարտավորությունների կատարման և դրանց վերահսկման մեխանիզմների մշակման գործողությունների հստակեցում:

Կարևոր է փաստել, որ հանքավայրերի շահագործման հետ կապված հիմնականում խախտված հողատեսքերի վերականգման աշխատանքները չեն կատարվում և ավելի նպատակահարմար է, որ այդ աշխատանքները իրականացվեն հենց ընդերքօգտագործողների կողմից:

Հանքարդյունաբերության բնագավառում մշտադիրտարկման իրականացում կիսամյակային և տարեկան կտրվածքով, վերահսկողություն տրամադրված պաշարների փաստացի արդյունահանման ծավալների նկատմամբ և այդ տեղեկատվության հրապարակայնության ապահովվում լիազոր մարմնի կողմից:

Նախագծի 106 էջում արված դիտարկումները արդիական են և ցանկալի է ,որ նման քննարկումների ժամանակ մասնակից դառնան ոչ միայն ազդակիր համայնքների ներկայացուցիչներն, այլ նաև մարզային կառույցների (մարզպետարանների) համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչները և հասարակական կազմակերպությունները:

Երևանի քաղաքապետարան

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ. (+374 11) 514 200, ֆաքս (+374 11) 514 004, էլ.փոստ՝ mayor@yerevan.am

№ 01/Ղ-331346 «16» 05 2018թ.

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աղաջանյան,

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի՝ 10.05.2018թ. հ. 02/01.30/6884-18 գրությամբ քննարկման ներկայացված «ԱՀԹՆ օրենսդրական և ինստիտուցիոնալ վերլուծություն» ուսումնասիրության նախագծի վերաբերյալ տեղեկացնում եմ հետևյալը.

Նախագծում հղում է կատարված «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքին, որն ուժը կորցրած է ճանաչվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով նորմատիվ, անհատական և ներքին իրավական ակտերի հրապարակման և ուժի մեջ մտնելու հետ կապված հարաբերությունների կարգավորումը տարբերվում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգավորումից: Այս առումով նախագիծը լրամշակման կարիք ունի:

Նախագծում հղում է կատարված «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքին, որն ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ հարկային օրենսգրքով:

Նախագծի Հավելված 1-ում ներառված «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը՝ գրեթե նույն խմբագրությամբ, արդեն իսկ ընդունված են ՀՀ Ազգային ժողովի կողմից, իսկ նույն հավելվածում հիշատակված «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերը բացակայում են:

Հարգանքով՝

ՏԱՐՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Իրավաբանական վարչություն
Կապ. Ա. Մարտիրոսյան 011 514-174

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԸՆԴՈՒՆՎԱԾ ԳՐԱՔՆ
Մ 10/14849
18 05 2018թ.

Լոռու մարզպետարան

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՃԹՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Նախագծի 6-րդ <<Ազդակիր համայնքներ>> բաժնի ԱՌԱՋԱՐԿՆԵՐ-ի մեջ ներառել հետևյալ գաղափարը.

   Վնասակար ազդեցության ենթարկվող համայնքներին պետ. բյուջեից մասնահանման կարգով հատկացվող բնապահպանական սուբվենցիաների (բնապահպանական և առողջապահական ծրագրեր իրականացնելու համար) գումարներն առնվազն կրկնապատկելու համար անհրաժեշտ է, որպեսզի այդ ծրագրերը ընդլայնված բյուջեով և պահանջվող չափանիշներով ներկայացնեն միջազգային դոնոր կազմակերպություններին: Ելնելով միջազգային կազմակերպությունների ծրագրային պահանջներից, համայնքները կարող են ՀՀ պետական բյուջեից ստացվող բնապահպանական գումարները որպես համաֆինանսավորում ներկայացնել դոնորներին, որով էապես կավելանան համայնքներին ուղղված բնապահպանական ծրագրերի իրականացման գումարները: Տվյալ դրույթը իրականացնելու համար, շահառու համայնքներին պետք է տրամադրել մասնագիտական և խորհրդատվական օգնություն:
2. Նախագծի 7-րդ <<<Համայնքի սոցիալ-տնտեսական ոլորտում ընդերքօգտագործողի ստանձնած պարտավորությունների վերահսկողության իրավական հիմքերի և ինստիտուցիոնալ կարողությունների գնահատում>> բաժնում առաջարկում եմ, որ համայնքի սոցիալ-տնտեսական ոլորտում ընդերքօգտագործողների պարտավորությունների պահանջների նկատմամբ վերահսկողություն և պատասխանատվության միջոցների կիրառում իրականացնեն ոչ թե ՀՀ ԲՆ բնապահպանական տեսչական մարմինները, այլ մարզպետարանները, քանզի մարզպետարանները ունեն տարբեր բնագավառների մասնագետներ և տիրապետում են մարզային և համայնքային սոցիալ-տնտեսական, բնապահպանական և այլ անհրաժեշտ տեղեկատվությանը:

   3. Նախագծի 3.1.1.-րդ <<Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատում և ռազմավարական բնապահպանական գնահատում. օրենսդրական և ինստիտուցիոնալ վերանայում>> բաժնի <<Հասարակության մասնակցություն ՇՄՍԱԳ/ՌԲԳ գործընթացին>> ենթաբաժնում առաջարկում եմ ներառել հետևյալ դրույթը.

   Երկրաբանահետախուզական աշխատանքների, հանքավայրերի շահագործման և ՇՄԱԳ-ով նախատեսված այլ գործունեությունների հետ կապված հասարակության մասնակցությունը հասարակական լսումներին և քննարկումներին շատ հաճախ կրում է ֆորմալ բնույթ, քանի որ մասնավորապես գյուղական վայրերում անցկացվող լսումներին մասնակցում են մի քանի մարդ, որոնք ուղղակի չեն հասկանում տվյալ ընկերության գործունեության բացասական հետևանքները, չունեն տարրական գիտելիքներ պոչամբարների, գրունտային ջրերի, ցիանիդի և այլնի վերաբերյալ: Տվյալ բացը լրացնելու համար կենսական անհրաժեշտություն է առաջանում այդ լսումներին

մասնակից դարձնել ՀԿ-ներին և գիտական հաստատությունների մասնագետներին: Հասարակական քննարկումներին այդ կազմակերպությունների ներկայությունը ապահովելու համար, կարծում եմ, որ կարելի է ՀՀ բնապահպանության նախարարության կամ մարզպետարաններին վերապահել այն լիազորությունը, որով նրանք կգրանցեն թե որ ՀԿ-ն կամ գիտական կազմակերպությունը տարվա կտրվածքով քանի անգամ է մասնակցել կազմակերպված քննարկումներին և ինչ ռացիոնալ լուծումներ է տվել: ՀԿ-ների ակտիվությունը խրախուսելու համար կարելի է կազմակերպել մրցանակաբաշխության եղանակ:

4. Նախագծի 9.2.1.-րդ <<Առաջարկություն ինստիտուցիոնալ համակարգի և կարողության տնտեսական գնահատականներ և վերանայումներ իրականացնելու վերաբերյալ>> ենթաբաժնում անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել հետևյալ մտահոգությունը.

Ներկայումս շենք-շինությունների, գործարանների, ջրամբարների, աղբավայրերի պոլիգոնների և այլ կառույցներ կառուցելու համար պահանջվում է տվյալ տեղանքի երկրաբանական ուսումնասիրությունը, որը իրականացնում են ՍՊԸ-ներ, ՓԲԸ-ներ և այլ ընկերություններ, որոնք իրենց աշխատակազմում կարող են չունենալ անգամ բարձր որակավորում ունեցող երկրաբան, բայց տալիս են ընդերքի, գրունտի և այլնի եզրակացություններ, որոնց բովանդակությունը և հավաստիությունը շատ մեծ կասկածի տեղիք են տալիս: Տվյալ ընկերության կողմից տրված եզրակացությունը ստուգելու համար, այն պետք է պատվիրվի այլ ընկերության, որի եզրակացությունը նույնպես կարող է հավաստի չլինել: Եթե պատկերացնենք, որ 3 տարի հետո ոչ պրոֆեսիոնալ մոտեցման պատճառով տեղի է ունեցել որևէ կարևոր օբյեկտի փլուզում գրունտի նստվածքի պատճառով և տվյալ ընկերությունը մեկ տարի է ինչ լուծարվել է, ապա ստացվում է պարադոքսալ վիճակ: Այս օրինակով պարզ է դառնում, որ հանրապետությունում պետք է գործի պետական երկրաբանական գործակալություն, որը խորը մասնագիտական փորձաքննության կենթարկի ոչ միայն օգտակար հանածոների հետ կապված հարցերը, այլև կարևոր օբյեկտների հիմքերի նկարագրությունները: Նշեմ, որ ԽՍՀՄ-ի ժամանակ բոլոր ստրատեգիական և կարևոր շինությունների հիմքերի վերաբերյալ ուսումնասիրությունները և եզրակացությունները կատարել է երկրաբանա-մարկշեյդերական գործակալությունը:

Երեսապատման քարերի արդյունահանման ներկա վիճակը և աշխատանքների բարելավման համապատասխան առաջարկություններ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Ոլորտում առկա են հետևյալ հիմնախնդիրները.

- *Ոչ մետաղական հանքավայրերի մեծ մասը շահագործվում է առանց համապատասխան մասնագետների: Որպես հետևանք՝*

- ոչ ճիշտ ուղղորդված պայթեցումներ, անհամապատասխան պայթուցիկ նյութերի օգտագործում, սև վառոդի և դետոնացիոն քուղի անբավարարություն և չափազանց բարձր գներ

- նվազում է օգտակար հանածոյի պիտանի բլոկների ելքը և բարձրանում է պատրաստի արտադրանքի ինքնարժեքը,
- խիստ մեծանում է հանքավայրի շահագործման նախագծային և իրական պատկերի միջև անհամապատասխանությունը,
- որոշ ժամանակ անց հանքավայրերը դառնում են անպիտան ու ոչ շահութաբեր,
- ձեռնարկությունները կանգնում են պայմանագրով ամրագրված կետերի չկատարմանն ու պետությանը (բնությանը) հասցված վնասի հատուցման փաստի առաջ:

- *Արդյունահանվում են փոքր ծավալներ: Որպես հետևանք՝*
- ձեռնարկություններում շրջանառու միջոցների մշտական պակաս,
- սեփական միջոցներով նոր տեխնոլոգիաների ներդրման և մեխանիկական բազայի թարմացման անհնարինություն, պահեստամասերի անբավարարություն, մեքենա-մեխանիզմների 80% և ավելի մաշվածություն,
- միջազգային ստանդարտներին չհամապատասխանող վերամշակված արտադրանքի արտահանման բացակայության պայմաններում արտադրանքը (քարաբլոկները) երեսապատման սալիկներ դառնալու փոխարեն գերազանցապես իրացվում է գերեզմանաքարերի պատրաստման համար:

- *Ընդերքշահագործող ու վերամշակող կազմակերպությունները վատ են տիրապետում բնապահպանական, հարկա-տուրքային օրենսդրությանը և հանքավայրերի անվտանգ շահագործման կանոններին: Որպես հետևանք՝*
- կոռուպցիոն ռիսկերի մեծացում,
- տեխնոգեն աղետների վտանգի մշտական առկայություն:

- Ժամանակակից բիզնեսին ոչ հարիր մտածելակերպ, բիզնեսի պլանավորման անհրաժեշտության չգիտակցում, հանքավայրերի և արտադրամասերի ոչ ճիշտ կառավարում:
- Ամենօրյա քննարկումների և դեռևս հարցի լուծման խնդիր է մնում երկրաբանահետախուզական և ընդերքարդյունահանման մրցույթային կարգով վարձակալությամբ տրվող հողատարածքների հարցը:
- Համայնքների ղեկավարների կողմից ընդերքի երկրաբանահետախուզական և արդյունահանման համար տրվող համաձայնությունները համապատասխան մասնագետների եզրակացության բացակայության պատճառով հաճախ ուղեկցվում են սխալներով, որը հետագայում առաջացնում է բարդություններ և տարաձայնություններ:
- Բնօգտագործման վճարների հաշվարկման բանաձևերի վերանայում:

Ուսումնասիրությունների արդյունքում ի հայտ են եկել վերը նշված հիմնախնդիրները, մասնավորապես առանց համապատասխան մասնագետների ընդերքշահագործումը, անարդյունավետ փոքր ծավալների արդյունահանումը, տեխնոլոգիական տարրական նորմերի խախտումները, և որպես արդյունք՝ հանքը շահագործող և վերամշակող ձեռնարկությունների աշխատանքների խիստ ցածր արդյունավետություն:

Վերլուծությունից պարզ է դառնում, որ այս հիմնախնդիրները լուրջ խոչընդոտ են հանդիսանում ոլորտում շուկայական նորմալ հարաբերությունների ձևավորմանն ու ոլորտի զարգացմանը: Դրանց հետևանքով էլ այսօր մարզում (նաև ամբողջ հանրապետությունում) իրականացվող շինարարական և ներքին հարդարման աշխատանքներում գերազանցապես օգտագործվում են տեղական շուկան ողողած ներկրովի երեսապատման շինարարական

սալիկներ և բնական ու արհեստական քարերից գեղարվեստական նշանակության այլ իրեր (շատրվաններ, բուխարիներ, արձանիկներ և այլն):

Ոլորտում զարգացմանն ուղղված համապատասխան բարեփոխումները չիրականացնելու դեպքում, հանրապետության շատ հանքավայրեր ոչ մրցունակ լինելու պատճառով, կարող են փակվել՝ կորցնելով նույնիսկ գերեզմանաքարերի և հուշակոթողների ներկայիս շուկան:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսօր, ցավոք սրտի, ոլորտը չի հանդիսանում տնտեսության զարգացման առաջնահերթ ոլորտներից մեկը, չնայած դրա համար կան լուրջ նախադրյալներ և հիմքեր:

Ելնելով տնտեսության համար ոլորտի զարգացման իրատեսական հեռանկարներից և ոլորտում հիմնախնդիրների լուծման հրատապությունից, առաջարկում եմ.

- Չլիցենզավորել այն ընդերքարդյունահանող կազմակերպություններին, որոնք իրենց տրամադրության տակ չունեն համապատասխան տեխնիկա և կադրային բազա:
- Բարդություններից և տարաձայնություններից խուսափելու համար նպատակահարմար է, որպեսզի համայնքի ղեկավարի կողմից ընդերքի երկրաբանահետախուզական և արդյունահանման համար համաձայնությունները տրվեն միայն տարածքային կառավարման մարմնի համապատասխան մասնագետների դրական եզրակացության դեպքում:
- Ընդերքօգտագործողներին, առանց մրցութային կարգի, վարձակալությամբ հատկացնել համապատասխան հողատարածքները՝ պահպանելով հողային օրենսդրության մյուս բոլոր նորմերը և պահանջները:
- Ոլորտի համապատասխան մասնագետների (երկրաբաններ, լեռնային ինժեներներ, մարկշեյդերներ) պատրաստման գործում կիրառել տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետների պատրաստման արդյունավետ եղանակը (ԵՊՀ-ի և ԵՊՃՀ-ի համապատասխան ֆակուլտետներում ընկերությունների կողմից ուսուցմանը զուգահեռ, 3-րդ կուրսից լավագույն ուսանողներին հովանավորում՝ հետագայում ուղեգրով աշխատանքի ընդունելու երաշխիքով):
- Միջազգային շուկա մրցունակ արտադրանք արտահանումը խրախուսելու համար կազմակերպել <<Հայաստանի քարեր>> մասնագիտացված ամենամյա ցուցահանդես:
- Կազմակերպել տեղական քարերից տարբեր արտադրանքների ու գեղարվեստական իրերի գովազդային բուկլետներ ու բրոշյուրներ տարբեր լեզուներով, որտեղ զետեղված լինեն նաև տարբեր ժամանակներում տեղական քարերի օգտագործմամբ հայ ճարտարապետության ու քարափորագրության լավագույն նմուշների լուսանկարները:
- Առաջատար տեխնոլոգիաների ներդրման, մեխանիկական բազային թարմացման նպատակով լեռնաարդյունաբերական ձեռնարկություններին տրամադրել ցածր տոկոսադրույքով երկարաժամկետ վարկեր:
- Փոխել բնավճարների ներկայիս հաշվարկման ձևը, անցնել մարված պաշարներից հաստատագրված գներով հաշվարկման եղանակին, դասակարգելով հաստատագրված գները ըստ քարաբլոկների ծավալային խմբերի՝ առանց իրացման փաստացի գնի հետ կապելու:

  Օրինակ՝

արդյունահանված յուրաքանչյուր խորանարդ մետր գրանիտի պիտանի քարաբլոկի համար.
1-ին խումբ (5խ.մ. և ավելի) – 10000դր.,
2-րդ խումբ (2-5խ.մ.) – 7000դր.,
3-րդ խումբ (1-2խ.մ.) – 3000դր.,
4-րդ խումբ(0.4-1խ.մ.) – 1000դր.,
5-րդ խումբ(0.4խ.մ.-ից փոքր) – 30դր.):
Տվյալ պարագայում յուրաքանչյուր հանքավայր իր նախագծում ունի պիտանի բլոկների ելքը իր խմբային տարանջատումներով: Այս մեթոդով բնավճարների հաշվարկը կպարզեցվի և կստիպի, որպեսզի ընդերքարդյունահանողները կիրառեն արդյունավետ արդյունահանման տեխնոլոգիաներ՝ նախագծային (քարաբլոկների ելքի և խմբերի) պարամետրերը պահպանելու ուղղությամբ:

ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Հաշվի առնելով այն փաստը, որ Հայաստանը բավականաչափ հարուստ է ոչ մետաղական պինդ օգտակար հանածոներով (բազալտներ, ֆելզիտային տուֆեր, հրաբխային տուֆեր, ցեոլիտներ, միներալային ներկող հակակոռոզիոն պիգմենտներ, տուֆաավազաքարեր, տրավերտիններ, պեռլիտներ, օբսիդիաններ, պեմզաներ, գրանիտի որոշ տեսակներ և այլն), որոնք իրենց տարատեսակներով, որակով և տեսքով ունեն մենաշնորհային դիրք հազարավոր կիլոմետր շառավղով, իրատեսական է, որ օրենսդրական դաշտի որոշ փոփոխությամբ, տարանցիկ միջպետական երկաթուղու վերաբացմամբ և համապատասխան գովազդային ակցիաների ուղեկցությամբ նշված օգտակար հանածոների արդյունահանումը և արտահանումը կավելանա ավելի քան 15 անգամ: Մասնավորապես կվերականգնվի նախկին ԽՍՀՄ-ի կորցրված անսպառ շուկաները (ԽՍՀՄ-ի խոշոր քաղաքների բազմաթիվ նշանավոր շենքեր, արձաններ, մետրոպոլիտենների կայարաններ և այլն ունեն հայկական հոյակերտ քարի, ձեռքի և ոգու շունչ):

Հանրապետությունում բնական քարերի արդյունավետ արդյունահանումը, միջազգային ստանդարտներին համապատասխան մշակումն ու արտահանումը մոտ ապագայում կբերի պետական եկամուտների զգալի աճի, իսկ որակյալ մասնագետների պատրաստումը՝ (երկրաբաններ, լեռնային ինժեներներ, քարի վարպետներ, դիզայներներ) հայ արհեստավորի ճանաչում արտերկրում:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ և ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՈՒՏԻԼԻԶԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

Երկրաբանահետախուզական և արդյունահանման ծավալների աճը անխուսափելիորեն բերում են տարածաշրջանի բնապահպանական և էկոլոգիական հավասարակշռության խաթարման: Տվյալ պարագան ստիպում է, որպեսզի հաշվի առնվեն բոլոր բացասական հետևանքները և հիմնովին կշռադատելուց հետո նոր տրվեն համապատասխան ընդերքի արդյունահանման և ուսումնասիրության թույլտվություններ:

Հանքարդյունաբերությունը հիմնովին խախտում և դեգրադացնում է տվյալ տարածքի բնական լանդշաֆտն ու էկոհամակարգերը, փոփոխում է մակերևութային և ստորգետնյա ջրերի ջրաբանական ռեժիմը ու ֆիզիկաքիմիական կազմը: Հաշվի առնելով մարզի

հանքավայրերի թվաքանակի աճը, անհրաժեշտ է ուժեղացնել հսկողությունը արդյունահանող և վերամշակող կազմակերպությունների նկատմամբ, որպեսզի նրանք չգերազանցեն նախագծային նորմատիվային արտանետումները և կատարեն նախատեսված բոլոր բնապահպանական և տեխնոլոգիական միջոցառումները:

Գործնականում անհրաժեշտ է, որ կազմակերպությունները սահուն անցում կատարեն դեպի էկոլոգիապես նոր «կանաչ» տեխնոլոգիաների և սարքավորումների ներդրմանը:

Պետք է հասնել նրան, որ լեռնաարդյունաբերությունից գոյացող թափոնները վերամշակման միջոցով հնարավորինս կրճատվեն, իսկ ոչ մետաղական օգտակար հանածոների շահագործման ժամանակ չառաջանան թափոններ, որը ներկայումս ջարդող-տեսակավորող ագրեգատների բացակայության պատճառով աղտոտում և անպիտան են դարձնում ահռելի տարածքներ: Շարժական ջարդող-տեսակավորող ագրեգատները հնարավորություն կտան գրանիտի, բազալտի, պորֆիրիտների, տուֆերի և այլ ապարների ոչ կոնդինցիոն մնացորդները վեր ածել խճի և ավազի, որոնք շուկայում բավականին մեծ պահանջարկ ունեն: Տվյալ ագրեգատները հնարավորություն կընձեռնեն նաև քարերով ծանրաբեռնված գյուղատնտեսական հողատեսքերի մաքրմանը քարերից, որը նույնպես համարվում է մեծ և չլուծված հիմնախնդիր:

Ինչպես հայտնի է լեռնաարդյունաբերությունը ուղեկցվում է հսկայական քանակությամբ թափոնների և արտանետումների առաջացումներով, որոնք ունեն խիստ բացասական ազդեցություն մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանության վրա:

Հարցը կայանում է նրանում, որ թափոնները և արտանետումները հաճախ իրենց կազմի մեջ այնպիսի տարրեր և միացություններ են պարունակում, որոնք հումք են հանդիսանում այլ արտադրությունների համար, բայց դրանք չկորզելու և չվերամշակելու պատճառով թունավորում են շրջակայքը: Լեռնաարդյունաբերության ոլորտում պետք է գործել հետևյալ սկզբունքով՝ այն ինչը մեզ խանգարում է, պետք է մեզ օգնի:

1. *Ավազակոպճային խառնուրդի վերամշակումից առաջացող կավատիղմային մնացորդների օգտագործումը գյուղատնտեսական հողերի բարելավման համար*

Ավազակոպճային խառնուրդ արդյունահանող և վերամշակող կազմակերպություններում (ԱԿԽ-ի ջարդում, մանրեցում, տեսակավորում, լվացում) առաջանում են զգալի քանակությամբ կավատիղմային մնացորդներ, որոնք կազմում են ԱԿԽ-ի ընդհանուր զանգվածի 7-16%-ը: Տվյալ մնացորդները ներկայումս չեն օգտագործվում և ուղղակի ճահճացնում են գետերի և լճերի հարակից տարածքները, այնինչ ապացուցված է, որ առաջացող կավատիղմը հողին տալով հիանալի կերպով բարելավում է հողի ստրուկտուրան, մեծացնում է նրա խոնավապահությունը, հողը հարստացնում է բույսերի համար մատչելի էլեմենտներով և միացություններով և թույլ է տալիս շուրջ 5 տարի տվյալ հողատարածքից առանց քիմիական պարարտանյութերի ներմուծման ստանա էկոլոգիապես մաքուր և առատ բերք:

2. *Ալավերդու պղնձաձուլարանի կողմից առաջացող մետալուրգիական շլակի օգտագործման հեռանկարներ*:

Ալավերդու պղնձաձուլարանը կոնվեկտորային պղինձի արտադրությանը զուգահեռ առաջանում է բավականին մեծ քանակությամբ մետալուրգիական շլակ: Տվյալ մետալուրգիական շլակը մի քանի տարի է ինչ չի օգտագործվում Հայաստանում պորտլանդ ցեմենտ արտադրող գործարանների կողմից և արդեն իսկ իրենց մեծածավալ քանակներով գրեթե լցրել են Ալավերդու գործարանի պահեստային տարածքները: Այնինչ տվյալ շլակը գրանուլացնելու փոխարեն կարելի է դեռևս հալույթի ժամանակ լցնել կաղապարների մեջ և ստանալ բազմապիսի միաձուլվածքներ (արձաններ, ծածկի և երեսապատման սալիկներ, նստարաններ, աղբամաններ և այլն), որոնք շատ պահանջված են: Շլակի միներալոգիական կազմից ելնելով, ստացված միաձուլվածքները բնութագրվում են շատ ամուր ստրուկտուրայով, արտաքին ֆիզիկա-քիմիական ազդեցությունների նկատմամբ բարձր կայունությամբ, արտաքին դեկորատիվությամբ, երկարակեցությամբ և այլն:

3. Պոչամբարների ռեկուլտիվացիա և կանաչապատում:

Մարզի ամենաթափոնաբեր ճյուղը հանդիսանում է լեռնաարդյունաբերությունը, մասնավորապես՝ գունավոր մետաղների խտանյութի ստացման կոմբինատները: Բնապահպանական բարեփոխումներ կատարելու համար անհրաժեշտ է նախապես մշակել այնպիսի համալիր գործողություններ, որոնք կնպաստեն թափոնների գործածության և հուսալի պահպանության ամբողջական համակարգի զարգացմանը:

Դեռևս խորհրդային տարիներից մարզը ժառանգել է միլիոնավոր տոննա պոչանքներ, որոնք մեծ սպառնալիք են Թումանյանի տարածաշրջանի շրջակա միջավայրի համար: Նախաձեռնող խմբի կողմից մշակվել է պոչամբարների ռեկուլտիվացիայի նոր եղանակ, ըստ որի ֆելզիտային և հրաբխային տուֆերի հանքավայրերի թափոնները կարելի է օգտագործել պոչամբարները ծածկելու համար: Ելնելով Տավուշի մարզի Քյորփլիի ֆելզիտային տուֆերի հանքավայրի փորձից (տուֆերի թափոնների վրա բնականոն աճած փարթամ անտառածածկույթ), Լոռու մարզի պոչամբարները 40-50սմ տուֆային մնացորդներով (տուֆային փոշի, խիճ, մանր մնացորդներ) ծածկելով և կանադական արագաճ բարդիների տնկելով ու խնամելով, կարճ ժամանակում (10-15 տարի) կունենանք արտադրական նշանակության փայտանյութ: Բացի շինափայտի ստացումից, կանխվում է պոչանքների սելավա-սողանքային լվացման և քամիների կողմից էռոզիայի առաջացման վտանգը, բարելավվում է լանդշաֆտային էսթետիկական տեսքը, խթանվում է տվյալ տարածքներում կենսաբազմազանության զարգացմանը: Այս խնդրի կարգավորմամբ լուծվում են նաև տուֆային թափոնների տակ մնացած տարածքների ազատման և նպատակային օգտագործման, թափոնների, սևահողի պահպանության, անապատացման դեմ պայքարի և շրջակա միջավայի բարելավմանը առնչվող այլ հիմնախնդիրներ:

4. Բնական քարի վերամշակման արտադրամասերից առաջացող թափոնների օգտագործում

Հանրապետությունում գործում են բավականին մեծ թվով քարավերամշակման արտադրամասեր, որոնք բնական քարերից պատրաստում են երեսապատման սալիկներ, ճանապարհի եզրաքարեր, հուշակոթողներ և այլն: Տվյալ արտադրատեսակների արտադրության ժամանակ առաջանում են շատ մեծ քանակությամբ թափոններ, որոնք

ներկայացված են բազալտների, գրանիտների, տուֆերի, տրավերտինների և այլ ապարների մնացորդներից՝ հիմնականում խճի և փոշու տեսքով: Տվյալ թափոնները հաճախ անբարեխիղճ տնտեսվարողների կողմից հեռացվում են արտադրամասի տարածքից և տեղադրում գեղատեսիլ վայրերում, որով ուղղակի զգալի վնաս են պատճառում շրջակա միջավայրին և վատթարացնում են բնական լանդշաֆտների տեսքը: Այնինչ տվյալ թափոնները կարելի է օգտագործել դեկորատիվ բետոնյա գեղարվեստական և կենցաղային արտադրատեսակներ պատրաստելու համար: Ներկայումս մի շարք արտասահմանյան ֆիրմաներ բնական քարերի մնացորդներից պատրաստում են զանազան իրեր, որոնք որոշ առումներով նույնիսկ գերազանցում են բնական քարերից պատրաստված տեսականուն: Նշենք, որ դեկորատիվ բետոնից պատրաստված իրերի ինքնարժեքը գրեթե կրկնակի անգամ պակաս է: Բացի այդ, բետոնի կիրառմամբ ստացվող տեսականուն կարող ենք տալ այնպիսի փորագրված զարդերի, օրնամենտների և այլ կառուցվածքային լուծումներ, որոնք հաճախ անհնար է բնական քարերի մշակման ժամանակ:

Այսպիսով պարզ է դառնում, որ եթե մի արտադրության համար որևէ նյութ համարվում է թափոն, ապա մյուս արտադրության համար այն կարող է համարվել անփոխարինելի հումք:

Ռացիոնալ կերպով օգտագործելով մեր ռեսուրսները, կարող ենք հաջողությամբ պահպանել մեր բնությունը և զուգահեռաբար ստանալ բավականաչափ եկամուտներ:

Սյունիքի մարզպետարան

Ի պատասխան ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի գրության տեղեկացնում ենք, որ «ԱՃԹՆ օրենսդրական եվ ինստիտուցիոնալ վերլուծություն» ուսումնասիրության նախագիծը քննարկվել է ՀՀ Սյունիքի մարզպետարանում, ինչի կապակցությամբ հայտնում ենք հետևյալը.

Նախագծի 6-րդ՝ Ազդակիր համայնքներ կետում (էջ 25) առաջարկում ենք նախատեսել, որ յուրաքանչյուր իրավունք ունեցող համայնք իրավունք ունի մասնաբաժին ստանալու տրամադրված դոտացիաներից, պայմանով, որ տվյալ համայնքը ներկայացնի ծրագրի առաջարկ, սակայն եթե տվյալ տարում այն համայնքը չի ներկայացնում ծրագրի առաջարկ, ապա այդ իրավունքը (այդ ծավալով) փոխանցվում է հաջորդ տարի:

Հարկ է նշել, որ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ պարբերությամբ արդեն իսկ սահմանված է հաջորդ տարի փոխանցման մեխանիզմը, որտեղ ասվում է, որ մասհանումները տվյալ (այսուհետ՝ առաջիկա) բյուջետային տարվա ընթացքում կատարվում են անմիջապես պետական բյուջեից՝ սուբվենցիայի տեսքով սույն օրենքի 3-րդ հոդվածում նշված նախապայմանների կատարման դեպքում: Մասհանումների չափերը որոշվում են՝ ելնելով սույն հոդվածում նշված համապատասխան ընկերությունների կողմից առաջիկա բյուջետային տարվան նախորդող երկրորդ, երրորդ և չորրորդ տարիների արդյունքներով պետական բյուջե փաստացի վճարված (2018 թվականի հունվարի 1-ից սկսած՝ միասնական հաշվից բնապահպանական հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվին հաշվեգրված) բնապահպանական հարկի հանրագումարից՝ պակասեցնելով այն բյուջետային տարվան նախորդող առաջին երկու տարիների կտրվածքով սույն օրենքով սահմանված կարգով համապատասխան համայնքներին կատարված մասհանումների չափով:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «ԱՃԹՆ օրենսդրական և ինստիտուցիոնալ վերլուծություն» ուսումնասիրության նախագծից հանել 6-րդ՝ Ազդակիր համայնքներ կետում ներկայացված վերոնշյալ առաջարկը: